

1856

Գ. Ի. Լենին

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ  
ՄԱՍԻՆ

3K23  
7-32

Պ Ա Տ Տ Ա Տ  
ՔՈՂՔԻԿՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՁԵՐԵՎԱՆ • 1939

30 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

K23

-32

ur.

14 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

# ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԳԵՏԱԿՐԱՏ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

7856

11 SEP 2013

В. И. ЛЕНИН  
О ПРОДОВОЛЬСТВЕННОМ  
НАЛОГЕ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939



9588  
39

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄՈՍԻՆ

ԴՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՎԱԿԱԿԱՆ ԹՐԱՎԱԿԱՆ ՏԵՍ ԿՐՈ  
ՊԱՅՄԱՆԱԿՐԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ներկայումս պարենային հարկի հարցն առանձնապես  
շատ ուշադրություն է գրալում և քննարկումներ, վեճեր  
առաջ բերում։ Այդ լիովին հասկանալի յէ, փորովհետեւ դա  
տվյալ պայմաններում քաղաքականության պիտագոր հար-  
ցերից մեկն և իրոք։

Հարցի քննությունը միքիչ խառնաշփոթ բնույթ և  
կրում։ Զափազանց հասկանալի պատճառներով, բոլորս ել  
տառապում ենք այլ մեղքով։ Առավել ևս ոզտակար կլինի  
վարժել այդ հարցին մոտենալ վո՛չ թե նրա «հրատապ» տե-  
սակետից, այլ ընդհանուր սկզբունքային կողմից։ Այլ խոս-  
քով՝ հայացք զցել այն նկարի ընդհանուր հիմնական ֆո-  
նին, վորի վրա այժմ մենք գծում ենք տվյալ որվա քաղա-  
քականության վորու գործնական ձեռնարկումների նախ-  
շերը։

Այդպիսի մի փոքք անելու համար յևս ինձ թույլ էմ տա-  
լու մի յերկար հատված մեջբերել իմ այն բրոշյուրից,  
վոր կրում և «Մեր որերի գլխավոր խնդիրը — «Զախ» յիրե-  
խայության և մանր-բուրժուականության մասին» վերնա-  
գիրը։ Այդ բրոշյուրը լույս է տեսել 1918 թվականին Պետ-

<sup>1</sup> «Փարենային հարկի մասին» բրոշյուրը գրվել է 1921 թ. ապրիլ  
13-ի և 21-ի միջև, լույս է ընծայվել 1921 թ. մայիսին և միաժամա-  
նակ դասեղիվ է «Красная Новь» ժուռնալի 1921 թ. № 1-ում։

բողը աղքակի Դեպուտատների խորհրդի հրատարակությամբ  
և պարունակում է նախ՝ 1918 թ. մարտի 11-ին Բրեստի  
հաշտության առթիվ դրվագմի լրագրական հոդված, յերկ-  
րորդ՝ 1918 թվականի մայիսի 5-ին թվագրված մի բանա-  
վեճ ձափ կոմունիստների այն ժամանակված մի խմբի զեմուն:  
Բանավեճն այժմ հարկավոր չե, և այն յես զուրս եմ զցում:  
Թողնում եմ այն, ինչ վերաբերում է «պետական կապիտա-  
լիզմի» և կապիտալիզմից զեպի սոցիալիզմ անցում կատա-  
րող մեր ժամանակակից եկոնոմիկայի հիմնական տարրերի  
վերաբերյալ դատողություններին:

Այս թի ինչ եյի զբել յես այն ժամանակ.

## ՌՈՒՍՍԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

1918 ԹՎԱԿԱՆԻ ԲՐՈՅՑՈՒՐԻՑ

«...Մեր Խորհրդային Հանրապետության մեջ տիրող՝  
զործերի ներկա զրության հանդեպ պետական կապիտալիզ-  
մը կինի մի քայլ դեպի առաջ: Յեթե, որինակ, կես  
տարուց հետո մեզանում պետական կապիտալիզմ հաստատ-  
վեր, ապա դա կիներ հսկայական հաջողություն և ամենա-  
վատահելի յերաշխիք այնի բանի, վոր մի տարուց հետո մե-  
զանում վերջնականապես կամրապնդի և անպարտելի կղառ-  
նա սոցիալիզմը:

Յես յերեակայում եմ, թե այս խոռքերից ինչպիսի աղ-  
նիվ զայրուցթով հեռու կփախչեն վամանք... ի՞նչպես:  
Խորհրդային սոցիալիստական Հանրապետության մեջ պե-  
տական կապիտալիզմին անցնելը կիներ մի քայլ առաջադի-  
մություն... Միթե սոցիալիզմին դավաճանել չե՞ այս:

«... Հենց այս կետի վրա պետք է ամենի մանրամասն  
կանգ առնել:

Նախ՝ պետք է պարզել, թե վորն է հենց այն անցումը

<sup>1</sup> Յերկեր, Համ. ԽII, ռուս. հրատ. Էջ 503—528, Հայ. հրատ.  
Էջ 659—694:

կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, վորը մեղ իրավունք ու  
չիմք է տալիս Խորհրդադիների սոցիալիստական հանրապե-  
տություն կոչվելու:

Յերկրորդ՝ պետք է հայտնաբերել այն մարդկանց  
սխանները, վորոնք չեն տեսնում, թե մեղանում սոցիալիզմի  
գլխավոր թշնամին մանր-բուրժուական տնտեսական պայ-  
մաններն են ու մանր-բուրժուական տարերքը:

Յերրորդ՝ հարկավոր է լավ ըմբռնել Խորհրդային պե-  
տության նշանակությունն իր տնտեսական տարրերությամբ  
բուրժուական պետությունից:

Քննենք այս բալոր յերեք հանդամանքները:

Թվում ե, թե գեռես չի յեղել մի այնպիսի մարդ, վորը  
Ռուսաստանի եկանոմիկայի հարցը քննելիս ժխտել այդ եկո-  
նոմիկայի անցումնային բնույթը: Թվում ե, թե վոչ մի կո-  
մունիստ չի ժխտել նաև այն, վոր «Սոցիալիստական խոր-  
հրդային հանրապետություն» արտահայտությունը ցույց է  
տալիս Խորհրդային իշխանությունը՝ դե-  
պի սոցիալիզմ տեղի ունենալիք անցումն իրագործելու, և  
վոչ յերբեք տվյալ տնտեսական կարգերը վորպիս սոցիա-  
լիստական ճանաչելը:

Բայց ի՞նչ է նշանակում անցումն բառը: Արդյոք եկո-  
նոմիկայի վերաբերմամբ կիրառելիս այս բառը չի նշանա-  
կում, վոր տվյալ հասարակակարգում քե՛ կապիտալիզմի,  
քե՛ սոցիալիզմի տարրեր, մասնիկներ ու կոորներ կան:  
Ամեն վոք ընդունում է, վոր՝ այ՛: Բայց այս բանը խոս-  
տովանող ամեն վոք չի խորհրդածում, թե հազար վորոնք  
են Ռուսաստանում գոյություն ունեցող տարրեր հասարա-  
կական-տնտեսական կացութածեների (ուկլած) տարրերը:  
Իսկ հարցի եյությունը հենց այս է:

Թվենք այդ տարրերը.

1) նահապետական, այսինքն՝ նշանակալից չափով նա-  
տարավալ, գյուղացիական տնտեսությունը.

2) մանր ապրանքային արտադրությունը (այս շարքին  
է պատկանում հացահատիկ վաճառող գյուղացիների մեծա-  
մանությունը).

3) մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմը .

4) պետական կապիտալիզմը .

5) սոցիալիզմը :

Ծուսաստանն այնքան մեծ ու խայտարդիտ է, վոր հասարակական-տնտեսական կացութաձևի այս բոլոր տարրեր տիպերը միահյուսվում են նրա մեջ : Այս հանգամանքն և հենց գրության առաջնահատկությունը :

Հարց ե ծագում, թե հապա վո՞ր տարրերն են դերակցում : Պարզ բան է, վոր մանր-գյուղացիական յերկրում մանր-բուրժուական տարրերն են գերակշուռմ և չի կարող չգերակշռել : Հողագործների մեծամասնությունը, այն ել ահադին մեծամասնությունը, մանր-ապրանքային արտողորդունքը են : Մեզանում պետական կապիտալիզմի (հացահատիկի մոնոպոլիս, վերահսկողության յենթակա ձեռնարկատերեր ու առևտրականներ, բուրժուական կոոպերատորներ) կեղևը պատում են մերթ այստեղ ու մերթ այնուղ սպեկուլանաները, և սպեկուլացիայի գլխավոր առարկան հացն է :

Գլխավոր կոնֆը ծավալիում ե հենց այս ասպարիզում : Ո՞ւմ և ո՞ւմ միջև և տեղի ունենում այս կոնֆը, յեթև խոսնելք տնտեսական կատեգորիաների տերմիններով, ինչպես ոնք և «պետական կապիտալիզմը» : Արդյոք այս բոլորին թվածու կարդով չորրորդ ու հինգերորդ աստիճանների<sup>9</sup> միջև : Իհարկե, վո՞չ : Այստեղ սոցիալիզմի դեմ կավում ե վո՞չ թե պետական կապիտալիզմը, այլ մանր բուրժուալիսն, գումարած մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմը, միասին, միահամուռ պայքարում են թե՛ պետական կապիտալիզմի, թե՛ սոցիալիզմի դեմ : Մանր բուրժուալիսն ընդդիմանում և ամեն տեսակ պետական, ինչպես պետական-կապիտալիստական, այնպես ել պետական-սոցիալիստական միջամտության, հաշվառման ու վերահսկողության : Իրականության միանդամայն անառարկելի փաստն ե այս, վորը չըմբռնելու մեջ և գտնվում մի շարք տնտեսական սխալների արմատը : Սպեկուլանուը, առևտրական կողոպտիչը, մոնոպոլիսական վիճեցնող—ահա մեր գլխավոր «ներքին» թշնամքն,

Խորհրդային իշխանության տնտեսական ձեռնարկումների թշնամքն : Յեթև 125 տարի առաջ Փրանսական մանր բուրժուաներին, ամենաթունդ և ամենանկեղծ հեղափոխականներին, դեռևս ներելի յեր առանձին, սակավաթիվ «բնորյալներին» մահապատիժ տալով ու դեկլարացիաների վորումներով սպեկուլանությն հաղթելու ձգուումը, ապա այժմ այս կամ այն ճախ եսերի կողմից հարցին զուտ Փրազյորական վերաբերմունք ցույց տալը յուրաքանչյուր գիտակից հեղափոխականի մեջ միայն զգլանք կամ նողկանք ե հարուցանում : Մենք շատ լավ դիտենք, վոր սպեկուլացիայի տընտեսական հիմքը մուտքայում արտասովոր լոյն ծալակունուցող մանր-սեփականատիրական խամին ե և մասնավորանունատիրական կապիտալիզմը, վորը հանձին յուրաքանչյուր մանր բուրժուայի իր գործակալն ունի : Մենք զիտենք, վոր այդ մանր-բուրժուական հիգրայի միլիոնավոր շոշափուները մերթ այստեղ, մերթ այնտեղ ընդդրկում են բանվորների առանձին փոքրիկ խավերը, զիտենք, վոր պետական մոնոպոլիայի՝ վիճարձն սպեկուլացիան ներս ե խուժուում մեր տնտեսական-հասարակական կյանքի բոլոր ծակոտիները :

Ով այս չի նկատում, նա հենց իր կուրությամբ յերեան և հանում, վոր մանր-բուրժուական նախապաշտումներին զիրի յեր միացել...» :

«...Մանր բուրժուան փողի պաշար ունի, միքանի հակար ռուբլի, վոր պատերազմի ընթացքում նա կուտակել ե «արդարությամբ» ու մանավանդ ստությամբ : Ահա այս և այն տնտեսական տիպը, վորը բնորոշ ե, իրեն սպեկուլացիայի ու մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմի հիմք : Փողը մի վկայական ե հասարակական հարստությունից բաժին ստանայու համար, և մանր սեփականատերերի բազմամիլիոն խավը, ամուր բանած պահելով այդ վկայականը, այն թաղյուում ե «ոլետությունից», չհալատալով վո՞չ մի սոցիալիզմի ու վոչ մի կոմունիզմի և «կուչ յեկած պաշտպանմիլով» պրոլետարական գոթորիկից : Կամ մենք այդ մտիր բուրժուային մեր վերահսկողությանն ու հաշվառմա-

նը կենթարկենք (մենք այդ կարող ենք անել, յիթե կտղմակերպենք չքավորությանը, այսինքն բնակչության մեծամասնությանը կամ կիսավորութարներին՝ պրոլետարական դիտակից ավանդաբարդի շուրջը), կամ նա մեր բանվորական իշխանությունն անփռւամիելի ու անվերել կերպով կտապալի, ինչպես տապալեցին հեղափոխությունը Նապոլեոններն ու Կալենցակները; Վորոնք աճել ու զորացել եյին հեց այդ մանր-սեփականատիրական Հոգի վրա: Այսպես և դրված հարցը: Միայն այսպես և դրված հարցը...»:

«...Հաղարները պահող, թաղցնող մանր բուրժուան պետական կապիտալիզմի թշնամին ե, և այդ հաղարները նա ցանկանում ե իրացնել անպայման իր համար, չքավորներին հակառակ, ընդհանուր պետական ամեն տեսակ վերահսկողության հակառակ, իսկ հաղարների գումարը սպեկուլացիային տալիս ե մի բաղմանիհարդ հիմք, վորը վիճեցնում ե մեր սոցիալիստական շինարարությունը: Յենթադրենք, վոր վորոշ թվով բանկոներ վորոշ ժամանակամիջոցում տալիս են արժեքների մի գումար, վորն արտահայտվում է 1.000 թվանշանով: Այնուհետև յենթադրենք, վոր մեզանում այդ գումարից 200-ը կկորչի մանր սպեկուլացիայի, ամեն տեսակ հափշտակության ու մանր-սեփականատիրական այն զանցառման չնորհիվ, վորը կատարվում է խորհրդացին գեկրետների ու խորհրդացին կարգադրությունների վերաբերմաբ: Յուրաքանչյուր դիտակից բանվոր կասից եթե յս կարողանայի այս հաղարից 300-ը տալ՝ ավելի կարդ ու կազմակերպություն ստեղծելու գնով, հոժարությամբ 200-ի փոխարեն 300 կտայի, վորովհետև Խորհրդացին իշխանության ժամանակ այս «տուրքը», ասենք, մինչև հարյուրի կամ հիսունի իջեցնելը հետո բոլորովին հեշտ դորձ կլինի, քանի վոր կարդն ու կազմակերպությունը կանոնավորված կլինեն, քանի վոր ամեն տեսակ պետական մոնոպոլիայի մանր-սեփականատիրական վիճեցումը վերջնականպես կհաղթահարվի:

Այս հասարակ թվական որինակով, վորին դիտմամբ վերին աստիճանի պարզ բնույթ ենք տվել՝ շարադրությու-

նը մատչելի դարձնելու համար, —պարզվում ե պետական կապիտալիզմի ու սոցիալիզմի այժմյան դրության հարաբերակցությունը: Բանվորների ձեռքում ե պետական իշխանությունը, նրանք իրավական լիակատար հնարավորություն ունեն վերցնելու ամբողջ հաղարը, այսինքն՝ վոչ մի կողեկի չտալու, այն գեղգում, յերբ սոցիալիստական նպատակով դուրծագրությունը բացակայում է: Այս իրավական հնարավորությունը, վոր փաստագիտությունը բանվորների ձեռքն անցնելու վրա յե հենվում, սոցիալիզմի մի տարրն է: Բայց մանր-սեփականատիրական ու մասնավոր կապիտալիզմության տարերքը շատ ճանապարհությունը իրավությունը կամ հակառակ կապիտալիզմը մի վիթխարի քայլ կիմներ դեպի տաշ, յերե նույնիսկ մենք (յս դիտմամբ վերցրի թվական այսպիսի որինակ, վորպեսզի ավելի ցայտուն ցույց տամ այլ), յեթե նույնիսկ մենք ավելի շատ վճարենք, քան հիմա, վորովհետև «գիտության համար» արժե վճարել, վորովհետև այդ ոգտակար ե բանվորներին, վորովհետև ամենից կարենքն անկարգության, քայլքայման, թափթփանության, հաղթահարումն ե, վորովհետև մանր-սեփականատիրական անփրանության շարունակվելն ամենամեծ, ամենից ահարկու վատանդն ե, վոր մեզ անպայման զեղի կորուս կտանի (յեթե մենք նրան չհաղթնենք), այնինչ, պետական կապիտալիզմին մեծ տուրք տալլ վո՞չ միայն մեղ դեպի կորուստ չի տանի, այլ ամենամիշտ ճանապարհով մեզ կհացնի սոցիալիզմին: Բանվոր վասակարկը, վորը սովորել ե, թե ինչպես պետք ե պաշտողանել պետական կարդը մանր-սեփականատիրական անփրանության դեմ, վորը սովորել ե, թե ինչպես պետք ե պետական կապիտալիստական ոկզրությունը կանոնավորել արտադրության խոշոր համապետական կազմակերպությունը, այն ժամանակ իր ձեռքում կունենաներեցները արտահայտությանը բոլոր կուրիները, և սոցիալիզմի ամբապնդումն ապահովված կիմնի: Պետական կապիտալիզմը տնտեսապես անհամեմատ

ավելի բարձր է, քան մեր այժմյան եկոնոմիկան. այս—  
առաջին:

Յերկրորդ՝ նրա մեջ վոչ մի սարսափելի բան չկա Խոր-  
չըրդային իշխանության համար, վորովհետև խորհրդային  
պետությունը մի պետություն է, վորի մեջ բանվարերի ու  
չքավորության իշխանությունն առահուված է»:

\* \* \*

«... Հարցն ե'լ ավելի պարզելու համար, նախ և առաջ  
բերենք պետական կապիտալիզմի ամենակոնկրետ որինակը:  
Բոլորին հայտնի յէ, թէ վորն և այդ որինակը. այդ Գերմա-  
նիան է: Այսուղ մենք տեսնում ենք «վերջին խոռօքը» ժա-  
մանակակից խոչոր կապիտալիստական տեխնիկայի ու պլա-  
նաշափ կազմակերպության, վոր յենք-արկվում և յունիկրօ-  
բուրծուական իմպերիալիզմին: Դեռ զցեց՛ք ընդգծած բա-  
ռերը, զինվորական, յունկերական, բուրժուական, իմպե-  
րիալիստական պետության տեղ զրեք նույնպես մի պետու-  
թյուն, միայն այլ սոցիալական տիպի, այլ դասակարգային  
բռվանդակություն ունեցող պետություն, խորհրդային,  
այսինքն՝ պրոլետարական պետություն, և դուք կոտանաք  
պայմանների այն ամբողջ գումարը, վորը տալիս և սոցիա-  
լիզմը»:

Սոցիալիզմն աներեակակայելի յէ առանց նորագույն դի-  
տության վերջին խոսքի համաձայն կառուցված խոչոր կա-  
պիտալիստական տեխնիկայի, առանց պլանաշափ պետական  
կաղմակերպության, վորը տասնյակ մթիվնավոր մարդկանց  
յենթարկում և արդյունքների արտադրության ու բաշխման  
գործում միասնական նորման ամենախիստ կերպով պահ-  
պանելուն: Դրա մասին մենք, մարքսիստներս, միշտ տաել  
ենք, և այն մարդկանց հետ, վորոնք նույնիսկ այդ չեն  
հասկացել (անարխիստները և ձախ եսերների առնվազն կես  
մասը), յերկու վայրեկյան ել չարժի կորցնել խոսելու համար:

Միաժամանակ՝ սոցիալիզմն աներեակակայելի յէ առանց  
պրոլետարիատի տիրապետության պետության մեջ. այս  
նույնպես այբուբեն է: Պատմությունը (վորից վոչ վոք,

բացի զուցե մենշևիկ առաջնակարգ բթազլուխներից, չե  
սպասել, վոր նա հարթ, հանդարտ, հեշտ ու պարզ կերպով  
«ամբողջական» ողջիալիզմ տար) այնպես յուրահատուկ  
յեղանակով ընթացավ, վոր 1918 թ. մոտերքը ծնեց սոցիա-  
լիզմի իրարից անջատ յերկու կեսերը, կողք-կողքի, ինչպես  
յերկու ապագա ճտեր, միջազգային իմպերիալիզմի կեղեկ  
տակ: Գերմանիան ու Ռուսաստանը 1918 թ. իրենց մեջ ամե-  
նից ալելի ակներե մարմնացնում յին մի կողմից՝ սոցիա-  
լիզմի եկոնոմիկական, արտադրական, հասարակական-տնտե-  
սական պայմանների նյութական իրականացումը և մյուս  
կողմից՝ սոցիալիզմի քաղաքական պայմանների իրականա-  
ցումը:

Պրոլետարական հաղթական հեղափոխությունը Գերմա-  
նիայում միանդամից, չատ մեծ հեշտությամբ կը ախջախեր  
իմպերիալիզմի ամեն տեսակ կեղեւ (վորը, զժրախտաբար,  
լավագույն սողոզատից և շինված և այդ պատճառով ել  
ամեն մի... ճտի ջանքերով չի կոտրվում), կիրականացներ  
համաշխարհային սոցիալիզմի հաղթանակը հաստատապես,  
առանց զժրախտությունների կամ չնչին դժվարություննե-  
րով, — իհարկե, յեթե «զժվարի» մասշտարը վերցնենք հա-  
մաշխարհային-պատմական, և վոչ թե քաղքենու նեղ խըմ-  
րակային չափանիշով:

Յեթե հեղափոխության «բռնկումը» Գերմանիայում գեռ  
դանդաղում է, ապա մեզ մի խնդիր և մնում — սովորել զեր-  
մանացների պետական կապիտալիզմը, ամբողջ ուժով ըն-  
դուրինակել այն, չխնայել վոչ մի զիկտառորդական միջոց,  
վորպեսզի արագ ընթանա արևմտականության ընդորինա-  
կումը բարբարոսական Ռուսիայի կողմից, և այդ նպատա-  
կով բարբարոսության զեմ կովելու համար կանդ չառնել  
վոչ մի բարբարոսական միջոցի առաջ: Յեթե անարխիստնե-  
րի ու ձախ եսերների մեջ կան մարդիկ (յես հանկարծակի  
հիշեցի Կարելինի ու Գեյի ճառերը ԿԳԿ-ում), վորոնք ըն-  
դունակ են նարցիսավարի գատելու, վոր իբր թե մեզ, հե-  
ղափոխականներիս, վայել չե զերմանական իմպերիալիզմից  
«լաս առնել», ապա պետք է մի բան տաել՝ անհուսալիորեն

(ու լիովին իրավացի կերպով) կորած կլինիք այն հեղափոխությունը, վորն այդպիսի մարդկանց լրջորեն բանի տեղ կդներ:

Ներկայումս Ռուսաստանում զերակշռում են հենց մանր-բուրժուական կապիտալիզմը, վորից քե' դեպի խոչըն պետական կամպիտալիզմը, քե' դեպի սոցիալիզմը մինչեւույն հանապարհն ետանում, տանում են այն ուղին, վորն անցնում է մինչեւույն միջանկյալ կայարանով, մի կայարան, վոր կոչվում են «արդյունքների արտադրության ու բաշխման համաժողովրդական հաշվառում» ու մերահսկողություն»։ Ով այս չի հասկանում, տնտեսական ամենաաններելի սխալն ե գործում, կամ իրականության փաստերը չլմանալով, յեղածը չտեսնելով, ճշմարտության յերեսին նայել չկարողանալով, կամ՝ սահմանափակվելով «կապիտալիզմի» ու «սոցիալիզմի» մերացակնն հակադրությամբ և խոր չլմարանելով այս անցման կոնկրետ ձևերն ու ասորձանները։

Փակագծի մեջ ասենք, վոր սա հենց այն թեորիական սխալն ե, վորը մոլորեցրեց «Новая Жизнь»-ի ու «Вперед»-ի բանակի լավագույն մարդկանց. դրանցից վատթարներն ու միջաները, ըթամտության ու թուլակամուռաթյան պատճառով, բուրժուազիայից սարսափած՝ նրա պոչից են քաշ գալիս, լավագույնները չհասկացան, վոր սոցիալիզմի ուսուցիչները իջուր չեցին խոսում կապիտալիզմից գեղի սոցիալիզմ անցնելու մի ամբողջ ժամանակաշրջանի մասին, և իջուր չեր, վոր նրանք չեցտում ենին նոր հասարակության «յերկունքի յերկարատես ցալելը», ընդվորում այդ նոր հասարակությունը դարձյալ մի վերացական գաղափար ե, վորը կյանքում այլ կերպ չի կարող մարմանալ, բայց յեթե այս կամ այն սոցիալիստական պետությունն ստեղծելու մի շարք բարձրագույն, անկատար կոնկրետ փորձերի միջոցով։

Հենց այն պատճառով, վոր Ռուսաստանի այժմյան տրնտեսական դրությունից առաջ գնալ չի կարելի առանց այն, ինչ ընդհանուր ե թե՛ պետական կապիտալիզմի կատարում։

Եկ' սոցիալիզմի համար (համաժողովրդական հաշվառում ու վերահսկողություն), ամբողջությամբ թեորիական անհեթեթություն ե իրեն և ուրիշներին «դեպի պետական կապիտալիզմի կողմը կատարվող եվուուցիայով» վախեցնելը։ Այդ նշանակում ե՝ մտքով սահել հենց «եվուուցիայի» իրական մանապարհոց «դուրս», չըմբռնել այդ ճանապարհը. իսկ գործնականում դա համապոր ե դեպի հետ, գեպի մանր-սեփականատիրական կապիտալիզմի կողմը բաշխուն։

Վորպեսզի ընթերցողը համոզվի, վոր յես միայն հիմա չեմ «քարձը» դնահատություն տալիս պետական կապիտալիզմին, այլ բոլչեկների կողմից իշխանությունը նվաճելուց առաջ ել եմ տվել, թույլ եմ տալիս մեջբերելու հետեւալ հատվածն իմ այն բրոցյուրից, վորը զրոված և 1917 թվի սեպտեմբերին և կրում ե «Սպառնացող աղետը և ինչպես պետք ե նրա զեմ կովել» վերնաշպիրը։

«...Մեկ փորձեցեք յունկերա-կապիտալիստական, կալվածատիրական-կապիտալիստական պետության տեղ դնել ենդափնիսկան-դնմոլորատական պետություն, այսինքն՝ մի պետություն, վորը հեղափոխականորեն խորտակում ե ամեն ուսակ արանություններ, վորը չի վախենում հեղափոխական միջոցներով ամենալիակատար դեմոկրատիզմն իրականացնելուց։ Դուք կտեսնեք, վոր իրապես հեղափոխական պետության որով պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն անխօսափելի, անլրես կերպով նշանակում ե մի քայլ և քայլե՞ր դեպի սոցիալիզմ»։

«...Վորովհետեւ սոցիալիզմը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ամենամու քայլը՝ պետական-կապիտալիստական մոնոպոլիզմը առաջ անցնելու համար»։

«...Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիզմի նյութական ամենալիակատար նախապատրաստությունն ե, նրա նախ ադուն ն ե, պատմական անդութքի այն աստիճանն ե, վորի ու մյուս, սոցիալիզմ կոչող աստիճանի միջև վոչ մի միջանկյալ աստիճան չկա» (էջ 27 ու 28)։

«...Նկատի ունեցե՛ք, վոր այս դրված և կերենսկու-

ժամանակ, և վոր այստեղ խոսքը վո՞չ թէ պրոլետարիատի գիտատությի, վո՞չ թէ սոցիալիստական պետության մասին և, այլ «հեղափոխական-դեմոկրատական» պետության։ Մի՞թե պարզ չե, թե մենք վորքան ավելի վեր ենք բարձրացել քաղաքական այդ ստորանից, վորքան ավելի լիովին մարմացրել ենք Խորհրդական սոցիալիստական պետությունն ու պրոլետարիատի գիտատուրան, այնքան ավելի մեզ քիչ և թույլատրելի վախենալ «պետական կապիտալիզմից»։ Մի՞թե պարզ չե, վոր Այուր-ական, տնտեսական, արտադրական իմաստով՝ մենք գեուս սոցիալիզմի «նախադասնը» չենք դունջում։ Եել այլ կերպ, քան առանց այս «նախադասով» անցնելու, վորին դեռ չենք հասել, հնարավոր չե սոցիալիզմի դանից ներս մտնել...»։

\* \* \*

«...Զափաղանց ուսանելի յէ նաև հետեյալ հանդամանքը։

Եեր ընկ. Բուխարինի հետ վիճում եյինք կԳԿ-ում, նա, ի միջի այլոց, նկատեց՝ մասնապետներին մեծ ռոճիկ տալու հարցում «մենք» «էնինց աջ ենք», վորովհետեւ այստեղ սկզբունքներից վոչ մի շեղում չենք տեսնում, հիշելով Մարքսի այն խոսքերը, թե վորոշ պայմաններում բանվոր գասակարգի համար ամենից նպատակարմար կլիներ «վճարելով ազատվել այդ ավազակախմբից» (այն ե՛ կապիտալիստների ավազակախմբից, այսինքն՝ բուրժուատիայից եեւ գնել հողը, ֆարբիկաները, զործարաններն ու արտադրության մյուս միջոցները)։

Այս չափաղանց հետաքրքրական դիտողություն ե»։

«...Խորամուխյեղեք Մարքսի ասածների իմաստի մեջ։

Խնդիրը վերաբերում եր անցյալ դարի 70-ական թվականների Անդրիային, մինչմոնոպոլիստական կապիտալիզմի կուլմինացիոն շրջանին, խոսքը մի յերկրի մասին եր, վորտեղ այն ժամանակ ամենից ավելի քիչ զինվորականություն ու բյուրոկրատիա կար, մի յերկրի, վարտեղ այն ժամանակ ամենից ավելի շատ հնարա-

վորություններ կային սոցիալիզմի «խաղաղ» հաղթության համար այն իմաստով, վոր բանվորները բուրժուազիային «փրկանք» տային։ Եեվ Մարքսն ասում եր՝ վորոշ պայմաններում բանվորներն ամենելին չեն հրաժարվի բուրժուազիային փրկանք վճարելուց։ Մարքսն իր ու սոցիալիստական հեղափոխության ազագայ գործիչների ձեռքերը չեր կաշկանդում հեղաշրջման ձևերի, յեղանակների, կերպերի հարցում, հիմնալի կերպով հասկանալով, թե այն ժամանակ վորքան բաղմաթիվ նոր խնդիրներ առաջ կդան, թե ինչպես կփոխվի հեղաշրջման ընթացքում ամբողջ իրադրությունը, վորքան հանախ ու ուժին կփոխվի նա հեղաշրջման ընթացքում։

Իսկ հապա Խորհրդային Բուռաստանում պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճվելուց հետո, շահագործողների ռազմական ու սաբուաժային գիմաղրությունն ընկածվելուց հետո, մի՞թե ակնհայտ չե, վոր Միքանի պայմաններ դասավորվել են այն պայմանների նմանությամբ, վորոնք կարող ենին դասավորվել կես դար առաջ Անդրիայում, յեթե այդ յերկիրն այն ժամանակ խաղաղ կերպով անցներ գեղի սոցիալիզմ։ Այս ժամանակ Անդրիայում կապիտալիստների՝ բանվորներին յենթարկվելու կարող եր առահովների հետեյալ հանդամանքներով։ (1) վոր բնակչության մեջ, գյուղացիության բացակայության հետեւնքով, բանվորները, պրոլետարները, թմով լիովին կերպակցում եյին (Անդրիայում 70-ական թվականներին նշաններ կային, վորոնք թույլ եյին տալիս հուսալու, վոր գյուղական բանվորների միջև սոցիալիզմը չափաղանց արագընթաց հաջողություններ կունենա)։ (2) վոր պրոլետարիատը հիանալի կերպով կաղմակերպված եր արհեստական միությունների մեջ (այս տեսակետից Անդրիան այն ժամանակ յերկրագների վրա տառաջին յերկիրն եր)։ (3) վոր քաղաքական ազատության դարավոր զարգացմանը դասակարածիված պրոլետարիատն ոժուված եր համեմատարար բարձր կուլտուրականությամբ։ (4) վոր Անդրիայի հոյակազորներն կազմակերպված կապիտալիստները յերկարատեւ վարժությամբ

սովորել Եյին քաղաքական ու տնտեսական հարցերը կոմպոզիտներով լուծելու—այն ժամանակ նրանք Եյին յերկրադնդի բոլոր յերկրների կապիտալիստների մեջ ամենալավ շաղմակերպվածները (այժմ այդ առաջնությունն անցել է Գերմանիային): Աչա թե ինչ հանգամանքների շնորհիւ կարող եր միտք ծագել, թե Անդիմայում հնարավոր և, վոր կապիտալիստները խաղաղ կերպով յենթարկվեն Անդիմայի բանվորներին:

Տվյալ պահին մեղանում այդ յենթարկումն ապահովված և վորոշ արմատական նախագրյաներով (Հոկտեմբերին տարված հաղթանակով և կապիտալիստների հոկտեմբերից փետրվար տեսող սագմական ու սարուտաժային գիմադրությունն ընկճելով): Մեզանում, բնակչության մեջ բանգորների, պրոլետարների թվական ամենակատարյալ գերակշռության ուն նրանց բարձր կաղմակերպվածության վիճակին, հաղթության զորդոն յեղակ այն հանգամանքը, վոր ամենից չքավոր ու արագորեն քայլայված զյուղացիությունը պրոլետարներին ունող հանդիսացալ: Վերջապես, մեզանում չկա վոչ բարձր կուլտուրականությունը, վոչ և՛ կոմպրոմիսների սովորությունը: Յեթե լավ մտածենք այս կոնկրետ պայմանների վրա, ապա մեզ համար պարզ կիրար, վոր մենք կարող ենք և պետք ե այժմ այնպես անենք, վոր միացնենք անխնա բնաջնջման ու կոմպրոմիսի կամ փրկանքի յեղանակները. անխնա բնաջնջումն այն անկուրտուրական կապիտալիստների վերաբերմամբ, վորոնք վոչ մի «պետական կապիտալիզմի» ընդառաջ չեն գնում, վոչ մի կոմպրոմիս մտքով չեն անցկացնում, վորոնք շարունակում են սպեկուլացիայով, չքայլորներին կաշառելով և այլ միջոցներով վիճեցնել խորհրդացին ձեռնարկումները, կոմպրոմիսի կամ փրկանքի յեղանակները այն կուլտուրական կապիտալիստների վերաբերմամբ, վորոնք համաձայն են «պետական կապիտալիզմին», ընդունակ են այն կիրառելու կյանքում և ողտակար են պրոլետարիատին իրրե խոչորակույն ձեռնարկությունների խելոք ու փորձառու կաղմակերպիչներ, ձեռնարկություններ, վորոնք իրոք ընդդրկում են

տասնյակ-միլիոնավոր մարդկանց արդյունքներ մատակարարելու գործը:

Բուխարինը հրաշալի կերպով զարդացած մարզուստոնեառաջեւու է: Այդ պատճառով նա վերհիշել է, վոր Մարքու խորապես իրավացի յեր, յերբ բանվորներին սովորեցնում էր, թե հենց սոցիալիզմին անցնելը հեշտացնելու շահերի տեսակետից կարևոր և պահպանել խոչորակույն արտադրության կաղմակերպությունը և լիովին թույլատրելի յէ այն միտքը, թե պետք է լավ վնարել կապիտալիստներին, փրկանք տալ նրանց, յեթե հանգամանքներն այնպես դասավորվեն (իբրև բացառություն եր), վոր կապիտալիստներին հարկադրեն խաղաղ կերպով յենթարկվել և կուլտուրական յեղանակով, կաղմակերպված կերպով, անցնել սոցիալիզմին՝ փրկանք տալու պայմանով:

Բայց նուխարինը սխալի մեջ և ընկել, վորովհետեւ խորածուի չի յեղել նուսաստանի ներկա մոմենտի, հենց բացարկ մի մոմենտի, կոնկրետ տուննանահատկության մեջ, յերբ մենք, նուսաստանի պրոլետարիատը, մեր քաղաքական կարգերով, բանվորների քաղաքական իշխանության ուժով, ամեն մի Անդիմայից ել ու ամեն մի Գերմանիայից ել սուզ ենք կանգնած և միենույն ժամանակ որինավոր սկսական կապիտալիզմի կաղմակերպությամբ, կուլտուրայի մակարդակով, սոցիալիզմը «մատնելու» նյութական-արտադրական նախագարանության աստիճանուով Արևմտյան Յելիբրուպայի պետություններից ամենահետամնացից ել հետ ենք մնացել: Մի՞թե պարզ չե, վոր այս առանձնահատուկ դրությունից բղխում և հենց առանձնահատուկ «փրկանքի» ամերաժեշտությունը մոմենտի համար, մի փրկանք, վոր բանվորները պետք ե առաջարկեն ամենակուլտուրական, ամենատաղանողավոր, կաղմակերպչապես ամենից ընդունակ այն կուպիտալիստներին, վորոնք պատրաստ են վերհրդացին իշխանության մոտ ծառայության մտնելու և բարենպատորեն ոգնելու «պետական» խոշորագույն արտադրության կաղմակերպմանը: Մի՞թե պարզ չե,

շոր այսպիսի տուանձնահատումի դրության ժամանակ մենք պետք են ջանանք խուսափիլ յերկրու տեսակի սխալներից, վորոնցից ամեն մեկն իր ձեռով մահր-բուրժուական և : Մի կողմից՝ անուղղելի սխալ կլինոր հայտարարել, թե քանի փոքր ընդունում ենք մեր տնտեսական «ուժերի» ու քաղաքական ուժի անհամապատասխանությունը, ապա «հետեւար» չպետք եր վերցնել իշխանությունը : Այդպիս գասում են «փրենց պատյանում փակված մարդիկ», վորոնք մոռանում են, վոր յերբեք «Համազատասխանություն» չի լինի, վոր այս չի կարող լինել հասարակության ղարգացման, ինչպես և ընության ղարգացման մեջ, վոր մի չարք փորձերի միջոցով միայն, վորոնցից յօւրաքանչյուրն առանձին վերցրած միակողմանի կլինի, վորոշ անհամապատասխանություն կաւելողի հաղթական սոցիալիզմը բարը յերկրների պրոլետարեների հեղափոխական զործակցությունից :

Մյուս կողմից՝ ակնհայտ սխալ կլիներ ազատություն տալ ազմուել-ազաղակ բորձրացնողներին ու . Փրազյորներին, վորոնք իրենց թույլ են տալիս հրապուրիլ «լաւ» հեղափոխականությամբ, բայց վորոնք անընդունակ են տոկուն, մտածված, կշուղատված, առենադժվար անցումներն ել հաշվի առնող հեղափոխական աշխատանքի :

Հեղափոխական կուսակցությունների ղարգացման ու նրանց գեմ բոլցեկիզմի մղած կոմի պատմությունը բարերախտաքար մեղ ժառանդություն և թողել խիստ վորոշակի զծած տիպեր, վորոնցից ձախ եսերներն ու անարիթմոները բավական ակնառու կերպով մարմնացնում են վատթաց հեղափոխականների տիրությունը : Նրանք այժմ դուռը են՝ մինչև հստերիկա, չնչառպատճեն լինելով, աղաղակում են «աջ բոլցեկիների» «Համաձայնողականության» գեմ : Բայց նրանք մտածել չեն կարողանում այն մասին, թե ինչով եր վատ «Համաձայնողականությունը» և ինչու յեն պատմությունն ու հեղափոխության ընթացքն արդարացի կերպով զատապարտել այն :

Կերենսկու ժամանակվա համաձայնողականությունն իշխանությունը հանձնում եր իմակերիալիստական բորժուա-

լիային, իոկ իշխանության հարցը յուրաքանչյուր հեղափոխության արժատական հարցն է : Հոկտեմբեր-նոյեմբերին բոլցեկիների մի մասի համաձայնողականությունը կամ վախճառում եր պրոլետարիատի ձեռքով իշխանությունը վերցնելուց, կամ ցանկանում եր իշխանությունը համարագես բաժանել վո'չ միայն «անհուսալի ուղեկիցների» հետ, վորպիսիք են ձախ եսերները, այլև մեր թշնամիների, չերովականների, մենակիների հետ, վորոնք անխուսափելի կերպով մեզ կիանողարեյին հիմնական հարցում՝ Սահմանադրությունը բողովը ցրելու, Բողայելուիներին անխնա խորտակելու, խորհրդային հիմնարկները լիովին կյանքի մեջ մտցնելու գործում, յուրաքանչյուր կոնֆլիկտայի ժամանակի :

Այժմ իշխանությունը գրավված, պահպանված ու ամրապնդված և մի կուսակցության, պրոլետարիատի կուսակցության ձեռքում՝ նույնիսկ առանց «անհուսալի ուղեկիցների»: Համաձայնողականությունն մասին խոսել այժմ, յերբ նույնիսկ խոսք չի կարող լինել իշխանությունը բաժանելու կամ բորժուազիայի դեմ պրոլետարիատի դիկտատուրայից հրաժարվելու մասին, նշանակում և պարզապես կաշաղակի նման սերտած, բայց չհանկացած բառեր կրկնել: «Համաձայնողականություն» անվանելով մի դրության, յերբ կարող ենք և պարտավոր ենք յերկիրը կառավարել, մենք աշխատում ենք առանց դրանց ափոսալու մեր կողմը դրավիլ կապիտալիզմի վարժեցրած տարրերից ամենակուլուրականներին, նրանց ծառայության ընդունել ընդդեմ մանր-սեփականատիրական քայլքայման, այդ նշանակում և՝ ամեններն չկարողանալ սոցիալիզմի շինարարության տնտեսական խողիբրների մասին մտածել»:

ՊԱՐԵՆՑՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ, ԱՌԵՎՏՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԿՈՆՑԵՍԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեջ բերված դատողություններում, վորոնք արված են 1918 թվին, մի շաբթ սխալներ կան ժամկետների վերաբերմամբ: Ժամկետներն ավելի յերկար դուրս յեկան, քան այն

ժամանակ յենթաղբլում եր: Այդ զարմանալի չե: Բայց մեր եկոնոմիկայի հիմնական տարրերը մնացել են նույնը: Գյուղացիական «Հքավորությունը» (պրոլետարներն ու կիսապրոլետարները) բազմաթիվ դեպքերում միջակ գյուղացիների յե վերածվել: Սրանից մանր-սեփականատիրական, մանր-բռութուական «տարերքն» ուժեղացել է: Խոկ 1918—1920 թվականներին քաղաքացիական պատերազմը չափազանց ուժեղացրեց յերկրի ավերումը, արգելք հանդիսացավ նրա արտադրողական ուժերի վերականգնմանը, ամենից ավելի արյունաքամ արեց հենց պրոլետարիատին: Սրան ավելացավ 1920 թ. անբերությունը, կերպ պակասությունը, անհասունների կոտորվելը, գոր ե՛լ ավելի խանդարեց արդյունաբերության ու տրանսպորտի վերականգնմանը, ազգելով, որինակ, գյուղացիների ձիերով մեր դլխավոր վառելիքը՝ փայտը տեղափոխելու վրա:

Իրեն հետևանք այս բոլորի, 1921 թ. զարնանը քաղաքական հանդամանքներն այսպես դատավորվեցին, վոր գյուղացիության գրությունը բարելավելու և նրա արտադրողական ուժերը բարձրացնելու համար շուտափույթ, ամենավճռական, ամենից արտակարգ միջոցներն անհետաձելիութեն անհրաժեշտ դարձան:

Ինչո՞ւ հենց գյուղացիության, և վոչ թե բանվորների:

Վորովհետև բանվորների վիճակը բարելավելու համար հարկավոր ե հաց ու վառելիք: Ամբողջ պետական տնտեսության տեսակետից այժմ ամենամեծ «խանդարումը» հենց սրանից ե առաջանում: Խոկ ավելացնել հացահատիկի արտադրությունն ու հավաքելը, վառելիք մթերելն ու տեղափոխեն այլ կերպ չի կարելի, յեթե վոչ գյուղացիության գրությունը բարելավելով, նրա արտադրողական ուժերը բարձրացնելով: Պետք ե գյուղացիությունից սկսել: Ով այս չի հասկանում, ով հակված ե գյուղացիներին այսպես առաջին տեղը դնելը համարել «հրաժարումն» պրոլետարիատի գիլտատուրայից կամ հրաժարման նման մի բան, նա պարզապես չի թափանցում գործի մեջ, անձնատուր ե լինում Փրազի իշխանության: Պրոլետարիատի գիլտատուրան պրո-

լետարիատի ձեռքով քաղաքականությունը վեկալարելն ե: Պրոլետարիատն իրեն զեկավարող, իրեն տիրապետող գաղակարդ, պետք ե կարողանա քաղաքականությանն այնպիսի ուղղություն տալ, վոր առաջին հերթին լուծի ամենաանհետաձդելի, ամենից ցցավոտ» խնդիրը: Այժմ ամենից ավելի անհետաձդելի յեն այն միջոցառումները, վորոնք կարող են անմիջապես բարձրացնել գյուղացիական տնտեսության արտադրողական ուժերը: Միայն այս նաևապարհով կարելի յե համանել թե՛ բանվորների դրությունը բարելավելուն և թե՛ բանվորների ու գյուղացիների գաշինքն ամրապնդելուն, պրոլետարիատի գիլտատուրան ամրապնդելուն: Այն պրոլետարը կամ պրոլետարիատի այն ներկայացուցիչը, վորը կցանկանար գիմել բանվորների գրության բարելավմանը վոչ այս նաևապարհով, զործնականում սպիտակ-գվարդիականների ու կապիտալիստների աշակեցը կհանդիսանար: Վորովհետև այս նաևապարհով չգնալ՝ նշանակում ե բանվորների ցեխային շահերը բարձր զասել զասակարգային շահերից, նշանակում ե բանվորի անմիջական, բոպեյական, մասնակի ողտի համար զոհաբերել ամբողջ բանվոր զասական ամբողջ համարի մեջ նրա գիլտատուրայի շահերը, կալվածատերերի ու կարգի, նրա գիլտատուրայի շահերը, կապիտալի լծից աշխատանքն ազատազրելու պայքարի մեջ նրա գեկավարող գերի շահերը:

Այսպես, ուրեմն, առաջին հերթին հարկավոր են գյուղացիության արտադրողական ուժերը բարձրացնելու շուտափույթ ու լուրջ միջոցառումներ:

Այս բանը զլում բերել չի կարելի առանց պարենավոր-ման քաղաքականության լուրջ փոփոխությունների: Այդպիսի մի փոփոխություն եր պարենամասնատրումը պարենային հարկով գոխարինելը, վորի հետ կարլած ե հարկը վճարելուց հետո, գոնե տեղական տնտեսական շրջանառության ասպարեզում, առեւտրի աղատություն տալը:

Վո՞րն ե պարենամասնատրումը պարենային հարկով փոխարինելու երությունը:

Դրա մասին սխալ պատկերացումներ շատ են տարած-

**ված:** Սիսալն առաջանում ե մեծ մասամբ այն բանից, վազ անցման ելության մեջ չեն թափանցում, հարց չեն տալիս իրենց, թե ինչից դեպի ինչն ե տանում այդ անցումը։ Գործն այնպես են պատկերացնում իրենց, վոր իրեւ թե անցումը տեղի յե ունեցել ընդհանրապես կոմունիզմից դեպի ընդհանրապես բուրժուականությունը։ Այդ սխալի դեմ անխուսափելուրեն հարկավոր ե մատնանշել այն, ինչ ասվել ե 1918 թ. մայիսին։

Պարենային հարկը ծայրահեղ կարիքից, քայլայումից ու պատերազմից առաջացած յուրահատուկ «ռազմական կոմունիզմից» կանոնավոր սոցիալիստական արդյունքավորանակության անցնելու ձևերից մեկն ե։ Խակ այս վերջինը, իր հերթին, բնակչության մեջ մանր գյուղացիության գերակշռությունից բղխած առանձնահատկություններ ունեցող սոցիալիզմից դեպի կոմունիզմ անցնելու ձևերից մեկն ե։

Յուրահատուկ «ռազմական կոմունիզմն» այն եր, վոր մենք փաստորեն գյուղացիներից վերցնում եյինք բոլոր ավելցուկները և յերեմն ել ուռյնիսկ վո՞չ թե ավելցուկները, այլ գյուղացու համար անհրաժեշտ պարենի մի մասը, վերցնում եյինք բանակի ու բանվորներին պահելու ծախսերը ծածկելու նպատակով։ Վերցնում եյինք մեծ մասամբ իրու պարտք՝ թղթադրամներ տալով։ Այլապես մանր-գյուղացիական քայլայլած յերկրում կալվածատերերին ու կապիտալիստներին մենք չեյինք կարող հաղթել։ Յեվ այն փառ-տը, վոր մենք հաղթեցինք (հակառակ աշխարհիս ամենա- ջղոր պետությունների կողմից մեր շահագործողներին ցույց որված ոժանդակության), միայն այն չե ցույց տալիս, թե բանվորներն ու գյուղացիներն իրենց ազատավերության համար մղած պայքարում հերոսության ինչ հրաշքներ կատարելու ընդունակ են։ Այդ փաստը ցույց ե տալիս նաև այն, թե գործնականում մենշեկիները, եսերները, կառուցին ու լնկի. բուրժուազիայի սպասավորների ինչպիսի դեր եյին կատարում, յերբ այդ «ռազմական կոմունիզմը» մեր յերեսովն եյին տալիս իրեւ մեղադրանք։ Այդ պետք ե համարել մեր արժանիքներից մեկը։

Բայց պակաս անհրաժեշտ չե իմանալ այդ արժանիքի իսկական չափը։ «Բազմական կոմունիզմը» մտցվել եր պատերազմից ու քայլայումից հարկադրված։ Նա պրոլետարիատի տնտեսական ինդիքներին համապատասխանող քաղաքականություն չեր և չեր ել կարող մնել։ Նա մի ժամանակվոր միջոցառում եր։ Մանր-գյուղացիական յերկրում իր գիկատառւրան իրականացնող պրոլետարիատի ուղիղ քաղաքականությունն այն կլինի, վոր նա գյուղացուն անհրաժշտ արդյունաբներ արդյունաբներուն ապահովությունն առաջանաւ կամ արդյունաբներական արդյունքները հացի հետ փոխանակի։ Միայն այսպիսի պարենավորման քաղաքականությունն ե համապատասխանում պրոլետարիատի ինդիքներին, միայն այսպիսի քաղաքականությունն ե ընդունակ սոցիալիզմի հիմքերն ամրապնդելու և նրան լիակատար հաղթության հասցնելու։

Պարենային հարկը մի անցում ե դեպի այդ քաղաքականությունը։ Մենք դեռևս այնքան քայլայլած ենք, այն ընկճված պատերազմի ծանրությունից (պատերազմ, վորը յերեկ գոյություն ուներ և կարող ե վաղը բորբոքվել կապիտալիստների ադահության ու կատաղության զորհիվ), վոր մեզ հարկավոր յեղած ամբողջ հացի փոխանություն, վոր մեզ հարկավոր յեղած ամբողջ հացի փոխանությունը, մենք մտցնում ենք պարենային հարկը, այսինքն՝ (բանակի ու բանվորների համար) նվազահարկը, այսպիսի անհրաժեշտ հացի քանակությունն ստանում գույն չափով անհրաժեշտ հացի քանակությունն ստանում ենք իրեւ հարկ, իսկ մեղադրը պիտի փոխանակենք արդյունաբներության արտադրանքի հետ։

Դրա հետ միաժամանակ, չողետք ե մոռանալ նաև հետևյալը։ Կարիքն ու քայլայումն այնքան մեծ են, վոր մենք չենք կարող միա ն գա մի ց վերականգնել խոշոր, դործարանային, պետական, սոցիալիստական արտադրությունը։ Դրա համար խոշոր արդյունաբներության կենտրոններում հարկավոր են հացի ու վառելիքի մեծ պաշարներ։ Հարկավոր և մաշված մեքենաները փոխարինել նորերով և այլն։ Մենք փորձով համոզվեցինք, վոր այդ միանդամից չի կարելի կատարել և դիմենք, վոր իմպերիալիստական քայլա-

յիչ պատերազմից հետո, նույնիսկ ամենահարուստ ու ամենից առաջավոր յերկրները վորոշ, բավական յերկար տարիների ընթացքում միայն կլարողանան լուծել այդ խնդիրը: Նշանակում է՝ անհրաժեշտ և վորոշ չափով ողնել մանր արդյունաբերության վերականգնմանը, վորը չի պահանջում մեկնամեր, չի պահանջում հումքի, վառելեքի, պարենի վո՛չ պետական ու վո՛չ ել խոչը պաշարներ, վորը կարող է խկույն վորոշ ողնություն հասցնել զյուղացիական արեստառությանը և բարձրացնել նրա արտադրողական ուժերը:

Իսկ ի՞նչ է ստացվում սրանից:

Ստացվում է այն, վոր առևտրի վորոշ (թեկուզ միայն տեղական) ազատության հոմքի վրա՝ վերածնվում են մանր բուրժուազիան ու կալիստալիզմը: Այս անկասկած է: Այս յերեսութիւններ առաջին աչք փակելը ծիծաղելի յէ:

Հարց և ծագում՝ արդյոք անհրաժեշտ չտ և այդ: Արդյոք կարելի՞ յէ այդ արդարացնել: Արդյոք վտանգավոր չե՞տի:

Նման հարցեր շատ են տալիս, և այդ հարցերը մեծ մասմբ յերեան են հանում այլպիսի հարցեր տվողների պարզամտությունը միայն (մեզմ արտահայտված):

Տեսե՞ք, թե 1918 թ. մայիսին յես ինչպես եյի վորոշել մեր եկոնոմիկայի մեջ գոյություն ունեցող զանազան հասարակական-տնտեսական կացութաձեւերի տարրերը (բաղադրիչ մասերը): Վոչ վոքի չի հաջողվի վիճարկել, վոր մեզանում գյություն ունեն այդ բոլոր հինգ կացութաձեւերի այդ բոլոր հինգ աստիճանները (կամ բազադրիչ մասերը), նահապետականից, այսինքն՝ կիսավայրենականից սկսած մինչև սոցիալիստականը: Վոր մանր-գյուղացիական յերերում գերակշռում է մանր-գյուղացիական, այսինքն՝ մասմբ նահապետական, մասմբ՝ մանր-բուրժուական «կացութաձեւ»», այդ ինքնըստինքյան ակներեւ և: Յեթե կա փոխանակություն, ապա մանր տնտեսության զարգացումը մանր-բուրժուական զարգացում է, կապիտալիստական զարգացում է, —այս անվիճելի ճշմարտություն է, քաղաքանտեսության այրբենական ճշմարտությունը, վորը հաս-

տառվաւմ և նաև ամենորյա վորձով և նույնիսկ քաղաքենու գիտողությամբ:

Իսկ այլպիսի տնտեսական իրականության հանդիպ ի՞նչ քաղաքականություն կարող է վարել սոցիալիստական պրոլետարիատը: Սոցիալիստական խոշոր զործարանի արտադրությունից տալ մանր ըյուղացուն նրան հարկադիր բոլոր արդյունքները, —հացահատիկի ու հումքի հետ փոխանակելով: Այդ ամենացանկալի, ամենից «Ճիշտ» քաղաքականությունը կլիներ: մենք չենց այսպես ել սկսեցինք: Բայց ի՞նչպիս անենք: Կամ պետք է փորձներ արգելել, լիովին կաշկանգել մասնավոր, վոչ-պետական փոխանակության, այսինքն՝ տուետի, այսինքն՝ կապիտալիզմի ամեն մի զարդացում, վորն անփուստիելի յէ միլիոնավոր մանր արտադրուզների դոյության ժամանակ: Այդպիսի քաղաքականությունը հիմարություն կլիներ և ինքնասպանություն այն կուսակցության կողմից, վոր կփորձեր այդ անել: Հիմարություն կլիներ, վորովհետեւ այլպիսի մի քաղաքականություն տընտեսապես անհնարին բան է: ինքնասպանություն կլիներ, վորովհետեւ նման քաղաքականություն փորձող կուսակցություններն անխուսափելի կերպով մեանկ են դուրս գալիս: ի՞նչ մեղքներս թագյնենք. կոմունիստաներից վոմանք մեղանչում եյին «մտքով, խոսքով ու գործով», ընկնելով չինց այդպիսի քաղաքականության մեջ: Աշխատենք այդ սիալներն ուղղել: Անպայման հարկավոր և ձեռք վերցնել այդ սիալներից, այլապես բոլորովին վատ կլինի:

Ցեվ կամ (վերջին հեարալիոր ու միակ ինլացի քաղաքականությունը) պետք է չփորձնենք արգելել կամ կաշկանգել կապիտալիզմի զարգացումը, այլ աշխատենք այն ուղղել գեղի պետական կապիտալիզմի հունը: Այս հնարալոր և տնտեսապես, վորովհետեւ պետական կապիտալիզմն այս

կամ այն ձեռվ, այս կամ այն աստիճանով, գոյություն ունի ամեն տեղ, վորտեղ պատ առևտրի և ընդհանրապես կապիտալիզմի տարրեր կան:

Արդյոք Խորհրդային պետության, պրոլետարիատի դիկտատորայի ու պետական կապիտալիզմի գուղղողումը, միացումը, միասնական գոյությունը հնարալո՞ր բան է:

Իհարկե, հնարավոր է: Յես հենց այս եյի ապացուցել 1918 թ. մայիսին: Հույս ունեմ, վոր այդ ապացուցել եմ 1918 թ. մայիսին: Այս քիչ ե. յես հենց այն՝ ժամանակ ապացուցել եմ, վոր մանր սեփականատիրական (թե՛ մանր-հահապետական, թե՛ մանր-բուրժուական) տարերքի հետ համեմատած՝ պետական կապիտալիզմը մի քայլ ե դեպի առաջ: Անհամար սխալներ են զործում, յերբ պետական կապիտալիզմը զուգադրում են, կամ համեմատում սոցիալիզմի հետ միայն, այնինչ, տվյալ քաղաքական-անտեսական պայմաններում, պարագիր ե պետական կապիտալիզմը համեմատել նաև մանր-բուրժուական արտադրության հետ:

Ինչպես թերիքական, այնպես և գործնական ամբողջ հարցն այն ե, վոր ուղիղ յեղանակներ գոտնենք այն բանի համար, թե ինչպես պետք ե կապիտալիզմի (մինչեւ վորոշ աստիճան ու մինչեւ վորոշ ժամանակ) անխուսափելի գարգացումն ուղղենք դեպի պետական կապիտալիզմի հունը, ինչ պայմաններում շրջապատենք այդ, ինչպես անենք, վոր պետական կապիտալիզմը մոտիկ ապագայում սոցիալիզմի վերածվի:

Այս հարցի լուծմանը մոտենալու համար, նախ և առաջ պետք ե ըստ կարելույն ավելի պարզ պատկերացնենք, թե մեր խորհրդային սիստեմում, մեր Խորհրդային պետության շրջանակներում, պետական կապիտալիզմն ինչ կլինի և ինչ կարող ե լինել գործնականում:

Թե Խորհրդային իշխանությունն ինչպես ուղղում կապիտալիզմի զարգացումը դեպի պետական կապիտալիզմի հունը, թե նա ինչպես ե «պատվաստում» պետական կապիտալիզմը, դրա ամենապարզ դեպքը կամ որինակը կոնցեսիաներն են: Մեզանում հիմա ամենքն ել համաձայն են,

վոր կոնցեսիաներն անհրաժեշտ են, բայց բոլորը չեն խորհում, թե կոնցեսիաների նշանակությունն ինչ է: Հասարակական-սոնտեսական կացութածերի և նրանց հարաբերակցության տեսակետից կոնցեսիաներն ի՞նչ են խորհրդային սիստեմի ժամանակ: Դա մի պայմանագիր է, մի բլոկ, մի դաշնք, վոր Խորհրդային, այսինքն՝ պրոլետարական, պետական իշխանությունը կնքում ե պետական կապիտալիզմի հետ՝ ընդդեմ մանր-սեփականատիրական (նահապետական ու մանր-բուրժուական) տարերքի: Կոնցեսիոները կապիտալիստն ե: Նա գործը վարում ե կապիտալիստորեն, շահույթի համար, նա համաձայնում ե պրոլետարական իշխանության հետ պայման կնքել արտակարգ, արտասովոր շահույթ ստանալու համար և կամ այնպիսի հույսի ստանալու համար, վորն այլ կերպ ձեռք բերել անհնարին և կամ չափազանց գժվար ե նրա համար: Խորհրդային իշխանության ոգուտը լինում ե այն, վոր իտկոյն կամ ամենակարծ ժամանակում պատպղական ուժերը զարգանում են, արդյունքների քանակը մեծանում է: Ասենք, մենք ունենք հարյուր հատ այսինչ գործանոցներ, հանքեր, անտառամատեր: Մենք այդ բոլորը մշակել չենք կարող՝ մեքենաներ, պարեն, տրանսպորտ չունենք: Նույն պատճառներով ել մենք վատ ենք մշակում մասաց բնագավառները: Խոշոր ձեռնարկությունների վատ ու անբավարար չափով արդյունքներ պատրաստելուց առաջնում ե մանր-բուրժուական տարերքի ուժեղացում իր բարոր արտահայտություններով, շրջակայիր (հետո նաև ամբողջ) գյուղացիական տնտեսության թուլացում, նրա արտադրողական ուժերի զլատում, նրա՝ դեպի Խորհրդային իշխանությունը տածած վատահության նվազում, հափշտակություններ ու մասսայական մանր (ամենալատանդապոր) սպեկուլացիա և այլն: Կոնցեսիաների ձեռք պետական կապիտալիզմ «պատվաստելով», Խորհրդային իշխանությունն ուժեղացնում ե խոշոր արտադրությունն ընդդեմ մանրի, առաջավորը՝ ընդդեմ հետամնացի, մեքենականն՝ ընդդեմ ձեռքի արտադրության, ավելացնում ե իր ձեռքում յեղած խոշոր ինդուստրիայի արդյունքները (վորոշ մասի ստացությունը ինդուստրիայի արդյունքները)

մը), պետականորեն կարդավորված տնտեսական հարաբերություններն ուժեղացնում ե իրեւ հակակշխո մանր-բուրժուական, անիշխանական հարաբերությունների: Պատշաճ չափով ու զգուշությամբ վարած կոնցեսիոն քաղաքականությունն, անկասկած, կողնի մեզ արտադրության վիճակը, բանվորների և զյուղացիների դրությունն արագությամբ (մի վորոշ, փոքր աստիճան) բարելավելու, իհարկե, վորոշ զոհաբերությունների զնով, ամենաթանգարժեք արդյունքներից տասնյակ ու տասնյակ միլիոն փուժ կապիտալիստին հանձնելու գնով: Ռժերի հարաբերականությունից և կախված և պայքարն ե վճռում այն չափի և այն պայմանների սահմանումը, վորոնց ժամանակ կոնցեսիաները մեզ ձեռնուու յեն և վտանգավոր չեն մեզ համար, վորովհետեւ կոնցեսիան նույնպես կովի մի տեսակ է, դասակարգային կովի շարունակությունն այլ ձևով և վոչ մի դեպքում դա դասակարգային կովիլ դասակարգային խաղաղությամբ փոխարինելու չի նշանակում: Կովի յեղանակները ցույց կտա պրակտիկան:

Համեմատած Առհերդային սիստեմի պետական կապիտալիզմի այլ ձերի հետ, կոնցեսիաների ձեռնով պետական կապիտալիզմը, կարելի յե ասել, ամենապարզ, ցայտուն, հատակ ու ճշգրիտ զծվածն է: Մենք այս զեպքում ունենք մի ուղղակի ձետական, գրավոր պայմանագիր Արեմայան Յելրոպայի ամենակուլտուրական, առաջավոր կապիտալիզմի հետ: Մենք ճիշտ զիտենք մեր ողուսներն ու մեր կորուսները, մեր իրավունքներն ու մեր պարտականությունները, ճիշտ զիտենք այն ժամկետը, վորի ընթացքում տալիս ենք կոնցեսիան, զիտենք ժամկետը լրանդուց առաջ հետզնման պայմանները, յեթե պայմանագիրը նախատեսում է ժամկետից առաջ հետ դնելու իրավունքը: Մենք վորոշ «ոտուրք» ենք տալիս համաշխարհային կապիտալիզմին, «փրկանք ենք վճարում» նրան այս ու այն հարաբերությամբ՝ իսկույն վորոշ միջոց ձեռք բերելով Առհերդային իշխանության դրությունն ամրապնդելու համար, մեր տրնակությունը վարելու պայմանները բարելավելու համար:

Կոնցեսիաների վերաբերմամբ խնդրի ամրովյա դժվարությունն այն է, վոր կոնցեսիոն պայմանագիր կնքելու ժամանակ պետք ե ամեն բան ծանր ու բարակ քննել ու կռել, իսկ այնուհետև պետք ե նրա կառարմանը հետեւել կարողանալ: Այսուղղ, անկասկած, դժվարություններ կան, և այսուղղ սկզբում հավանորեն անխուսափելի յեն սխալները, բայց այդ դժվարություններն ամենաթեթև դժվարություններն են սոցիալական հեղափոխության մյուս խնդիրների համեմատությամբ և, մասնավորապես, պետական կապիտալիզմի վարդացման, թույլատրման և պատվաստման մյուս ձեերի համեմատությամբ:

Կուսակցական և խորհրդային բոլոր աշխատողների ամենակարեւոր խնդրը՝ պարենային հարկը մացնելու կարգեցությամբ, այն է, վոր նրանք կարողանան «կոնցեսիոն» (այսինքն «կոնցեսիոն» պետական կապիտալիզմի նմանությունն ունեցող) քաղաքականության պրինցիպները, սկզբունքները, հմտունքները կիրառել կապիտալիզմի, ազատառեալիզմի, տեղական շրջանառության մյուս ձեերի վերաբերմամբ և այլն:

Վերցնենք կոստպերացիան: Իզուր չեր, վոր պարենային հարկի դեկրետը պատճառ յեղավ կոստպերացիայի կամնագորությունն անմիջապես վերափննելու և նրա «ապատությունն» ու իրավունքները վորոշ չափով լայնացնելու: Կոստպերացիան ել պետական կապիտալիզմի մի տեսակն է, միայն ավելի քիչ պարզ, ավելի աղոտ գծված, ավելի խճճված մի տեսակը, վորն այդ պատճառով զործնականում մեր իշխանության առաջ ավելի մեծ դժվարություններ և գնում: Մանք ապրանքարտադրողների կոստպերացիան (վորի ժամանքն է խոսվում այսուղղ, իրեւ մանր-բուրժացիական յերկրում զերիչխոզ ու տիպիկ ձեի մասին և վոչ թե բանվորական կոստպերացիայի մասին) անխուսափելի կերպով առաջ և բերում մանր-բուրժուական կապիտալիստական

1 Յերկեր, Համ. ԽVI, սուս հրատ. հջ 242, 243, Հայ. Հրատ. հջ 345—347:

Հարաբերություններ, նպաստում և դրանց զարգացմանը, կապիտալիստիկներին քաշում և առաջին չարքը, նրանց և տալիս ամենամեծ ոգութը։ Այդ ուրիշ կերպ չի ել կարող լինել, քանի վոր գոյություն ունի մանր տնտեսատերերի գերակշռություն, ինչպես և փոխանակության հնարավորություն ու անհրաժեշտություն։ Ռուսաստանի ներկա պայմաններում կոռպերացիայի ազատությունն ու իրավունքները կապիտալիզմի ազատություն ու իրավունքներ են նշանակում։ Այս ակներեւ ճշմարտության հանդեպ աչք վակելը հիմարություն կամ հանցանք կլիներ։

Բայց «կոռպերատիվ» կապիտալիզմը, ի տարբերություն մասնատիրական կապիտալիզմից, Խորհրդային իշխանության ժամանակակից հանդիսանում և պետական կապիտալիզմի մի այլ տեսակը և, իբրև արդարիսին, նա հիմա շահավետ և ուժտակար և մեղ համար՝ հասկանալի յե, վորոշ չափով։ Վորչափով պարենային հարկը նշանակում է մնացած (իբրև հարկ չգտնելով) ալելցուկների վաճառման ազատություն, այն չափով մեղ անհրաժեշտ և ջանք գործադրել, վոր գեափի կոռպերատիվ կապիտալիզմի հունն ուղղենք կապիտալիզմի այդ զարգացումը, վորովհետև վաճառելու ազատությունը, առեւտի ազատությունը կապիտալիզմի զարգացում և։ Կոռպերատիվ կապիտալիզմը նման է պետականին այն տեսակետից, վոր հեշտացնում է հաշվառումը, վերահսկողությունը, հսկումը, պայմանագրային հարաբերությունները պետության (այս գեալքում Խորհրդային պետության) ու կապիտալիտի միջև։ Կոռպերացիան, իբրև առեւտի ձե, մասնավոր առեւտից ավելի շահավետ ու ավելի ողտակար և վո՛չ միայն մատնանշված պատճառներով, այլև այն պատճառով, վոր նա հեշտացնում է միլիոնալոր բնակչության, առաջ նաև գլխովին ամբողջ ընակչության միավորումը, կազմակերպումը, իսկ այս հանդամանքն իր հերթին հսկայական պլյուս և պետական կապիտալիզմից այնուհետև սոցիալիզմին անցնելու տեսակետից։

Համեմատենք կոնցեսիաներն ու կոռպերացիան իբրև պետական կապիտալիզմի ձեւեր։ Կոնցեսիան հիմնվում է խո-

չոր մեքենական արդյունաբերության վրա, կոռպերացիան՝ մանր, ձեռքի, մասամբ նույնիսկ նահապետական արտադրության վրա։ Կոնցեսիան յուրաքանչյուր առանձին կոնցեսիոն պայմանագրով վերաբերում և մի կապիտալիտի, կամ մի ֆիրմայի, մի սինդիկատի, կարտելի կամ տրեստի։ Կոռպերացիան ընդդրկում է բազմահազար, նույնիսկ միլիոնավոր մանր տնտեսատերերի։ Կոնցեսիան թույլատրում և և նույնիսկ յենթադրում ճիշտ պայմանագիր ու ճիշտ վորոշած ժամկետ։ Կոռպերացիան չի թույլատրում վո՛չ լիովին ճիշտ պայմանագիր, վո՛չ ել լիովին ճիշտ վորոշած ժամկետ։ Կոռպերացիայի վերաբերյալ որենքը վերացնելը շատ ավելի հեշտ և, քան կոնցեսիայի պայմանագրերը վոչնչացնել՝ նշանակում չընչացնելը, բայց պայմանագրերը վոչնչացնել՝ և միանդամից, պարզապես, իսկույն խոնդ կապիտալիտի հետ կնքած տնտեսական դաշնորդի կամ տնտեսական «համակեցության» փաստական հարաբերությունները, այնինչ կոռպերացիայի վերաբերյալ որենքը վո՛չ մի վերացում, վո՛չ մի որենք ընդհանրապես վո՛չ միայն միանդամից չեն վոչնչացնի Խորհրդային իշխանության ու մանր կապիտալիստիների փաստական «համակեցությունը», այլև ընդլիուտիների փաստական հանրապես ի վիճակի չեն փաստական տնտեսական հարաբերությունները խոնդու։ Կոնցեսիոններին «հսկելը» հեշտ և, կոռպերատորներին՝ դժվար։ Կոնցեսիայից սոցիալիզմին անցնելը խոչորին անցնելն և, այսինքն՝ մի անցում, վորն ավելի բարդ և, բայց վորը դրա փոխարեն ընդունակ և հաջողություն գեալքում բնակչության ավելի լայն մասսաներ ընդունակ և զրկելու, ընդունակ և զին մինչսոցիալիստական, նույնիսկ մինչկապիտալիստական՝ ամեն մի «նորության» դիմադրելու տեսակետից ամենահամառ, հարաբերությունների ավելի իոր ու ավելի կենսալի արմատները քանդելու և հանելու։ Կոնցեսիաների քաղաքականությունը հաջողության գեալքում մեղ կտա սակավաթիվ ու մերի համեմատությամբ որինա-

կելի խոշոր ձեռնարկություններ, վորոնք կանդնած են ժամանակակից առաջավոր կապիտալիզմի մակարդակի վրա. միքանի տասնյակ տարիներից հետո այդ ձեռնարկություններն ամբողջովին կանցնեն մեր ձեռքը: Կոոպերատիվ քաղաքականությունը հաջողության գեղքում մեզ կտա այն, վոր մանր տնտեսությունը կուժեղանա և կհեշտանա նրա անցումը, անորոշ ժամանակամիջոցում, գեղի հոչոր արտադրություն՝ կամավոր միավորման հիմունքներով:

Վերցնենք պետական կապիտալիզմի յերրորդ տեսակը: Պետությունը զործի յե ներգրավում կապիտալիստին իրեն վաճառականի, պետական արդյունքները վաճառելու և մանր արտադրողի արդյունքները զնելու համար, նրան վորոշ կոմիտիոն տոկոս վճարելով: Զորբորդ տեսակը՝ պետությունը ձեռնարկու-կապիտալիստին կապալով և տալիս պետությանը պատկանող արտադրական հաստատությունը կամ զործանոցը կամ անտառամասը, հողամասը և այլն, ընդ-վորում վարձակալական պայմանագիրն ամենից ավելի կոնցեսիոն պայմանագրի յե նման: Պետական կապիտալիզմի այս վերջին յերկու տեսակների մասին մեղանում բարորովին չեն խոսում, ամենաեն չեն մտածում, բոլորովին չեն նկատում օրանք: Բայց այդ առաջանում ե վո՛չ թե նրանից, վոր մենք ուժեղ ու խելք ենք յեղել, այլ նրանից, վոր թույլ ենք ու հիմար: Մենք վախենում ենք «ստոր ճշմարտության» յերեսին ուղղակի նայելուց և չափազանց շտուենք անհնատուր լինում «մեզ բարձրացնող խարելյության» իշխանությանը: Մեզ շաբունակ մոլորեցնում ե այն, վոր «մենք» կապիտալիզմից անցնում ենք սոցիալիզմին, մոռանալով նշգրիտ կերպով, պարզ պատկերացնել, թե ովքեր ենք այդ «մենքը»: Այս պարզ պատկերացումը չմոռանալու համար անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ մեր եկոնոմիկայի մեջ գոյություն ունեցող հասարակական տնտեսության բոլոր—անպայման առանց բացառության բոլոր—բազմական կացութաձևերի, բազալրիչ մասերի այն ցուցակը, վորը յես տվել եմ 1918 թ. մայիսի 5-ի հոդվածում:

«Մենք», պրոլետարիատի ովանդարդը, առաջավոր ջոկատը,

անմիջապես անցում ենք կատարում դեպի սոցիալիզմ, բայց առաջավոր ջոկատն ամբողջ պրոլետարիատի մի փոքրիկ մասն ե միայն, իսկ պրոլետարիատն իր հերթին բնակչության ամբողջ մասայի մի փոքրիկ մասն ե միայն: Յեվ վորպեսպի մինքնք» կարողանանք սոցիալիզմին անցնելու մեր ինքիրը հաջողությամբ լուծել, զրա համար պետք ե հասկանալ, թե մինչիկապիտակիտական հարաբերություններից սոցիալիզմին անցնելու համար ինչ միջակա ուղիներ, յեղանակներ, միջոցներ ու հնարիներ են հարկավոր: Այս ե զործի ամբողջ ելությունը:

Նայեցե՞ք ՈՍՖի Հ քարտեզին: Վորոգգայից չյուսիս, Դոնի Ռոստովից և Սարատովից հարավ-արևելք, Արենուրդից ու Ռմակից հարավ, Տոմսկից չյուսիս ընկած են անձայրածիր տարածություններ, վորոնց վրա միքանի տասնյակ կուլտուրական վիթխարի պետություններ կտեղավորվելին: Յեվ այս բոլոր տարածությունների վրա թագավորում ե նահապետականությունը, կիսավայրենությունն ու ամենախկական վայրենությունը: Իսկ մնացած ամբողջ Ռուսաստանի գյուղացիական խուլ անկյուններում: Ամենուրե՞ք, վորոնդ տասնյակ վերստեր ձգվող գյուղական ճանապարհները, ավելի ձիշ՝ տասնյակ վերստեր ձգվող ճանապարհագուրկ տարածությունները բաժանում են գյուղը յերկաթուղուց, այսինքն՝ կուլտուրայի, կապիտալիզմի, խոշոր արդյունաբերության, մեծ քաղաքի հետ ունենալիք նյութական կամ կապից: Մի՞թե այդ բոլոր վայրերում չեն իշխում նմանապես նահապետականությունը, որը մովականությունը, կիսավայրենությունը:

Կարելի՞ յե արդյոք յերեակայել, թե Ռուսաստանում գերիշխող այս վիճակից անմիջապես սոցիալիզմին անցնելը հնարավոր ե իրականացնել: Այո՛, վորոշ չափով հնարավոր ե, բայց միայն մի պայմանով, վորի մասին այժմ մենք ձիշա գիտենք, չնորհիկ մի վիթխարի ու ավարտված գիտական աշխատության: Այդ պայմանն ելեկորիֆիկացիան ե: Յեթե մենք միքանի տասնյակ ուայոնական ելեկորուկայաններ կառուցենք (այժմ մենք դիտենք, թե վորտեղ

և ինչպես կարելի յե ու պետք ե կառուցել դրանք), յեթե մենք դրանցից ելեկորական եներդիա անցկացնենք ամեն գյուղ, յեթե բավականաչափ ելեկորումուսուներ և այլ մեքենաներ ճարենք, այն ժամանակ նահապետականությունից սոցիալիզմին անցնելու համար միջին աստիճանների, միջակ ողակների կարեք չի լինի կամ համարյա թե չի լինի: Բայց մենք շատ լավ գիտենք, վորոյ այլ «մեկ» պայմանը, միմիայն առաջին հերթի աշխատանքների համար՝ առնվազն տասնյակ տարիներ ե պահանջում, իսկ այդ ժամկետի կըրծատումն իր հերթին հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ պրոլետարական հեղափոխությունը հաղթի այնպիսի յերկրներում, ինչպես Անդրկան, Գերմանիան, Ամերիկան են:

Իսկ մերձավորագույն տարիների համար պետք ե կորողանանք մտածել այն միջակա ողակների մասին, վորոնք կարող են դյուրացնել նահապետականությունից, մանր արտադրությունից սոցիալիզմին անցնելը: «Մենք» դեռ ելի հաճախ մոլորդում ենք այն դատողությամբ, թե «կապետալիզմը չարիք ե, սոցիալիզմը՝ բարիք»: Բայց այս դատողությունը սիալ ե, վորովհետեւ մոռանում ե առկա հասարական անտեսական կացութաձերի ամբողջ գումարը, մերցնելով սրանց միջից միայն յերկուսը:

Կապիտալիզմը չարիք ե սոցիալիզմի համեմատությամբ: Կաղիտավալիզմը բարիք ե միջնադարի համեմատությամբ, մանր արտադրութների մանրատված վիճակի հետ կապված բյուրոկրատիզմի համեմատությամբ: Վորչափով մենք դեռ ուժ չունենք մանր արտադրությունից անմիջապես սոցիալիզմին անցնեն իրականացնելու, այնչափով կապիտալիզմն անխուսափելի յե, վորոշ չափով, իրեն մանր արտադրության ու փոխանակության տարերային արդյունք, և այնչափով պետք ե ողտադրծենք կապիտալիզմը (առանձնապես ուղղելով այն դեպի պետական կապիտալիզմի հունը), իրեն մանր արտադրության ու սոցիալիզմի միջև ընկնող միջակա ողակ, իրեն արտադրողական ուժերը բարձրացնելու միջոց, ճանապարհ, հնարանը, յեղանակ:

Վերցրե՛ք բյուրոկրատիզմի հարցը և նայեցե՛ք նրան անտեսական կողմից: 1918 թ. մայիսի 5-ին մեր տեսադաշտում բյուրոկրատիզմ չի յերևում: Հոկտեմբերյան հեղափոխությունից կես տարի անց, այն ժամանակից հետո, յերբ վերևից մինչև ներքև խորտակեցինք հին բյուրոկրատական մեքենան, մենք այդ չարիքը դեռ չենք զգում:

Անցնում ե ելի մի տարի: Ուստաստանի կոմունիստական կուսակցության VIII համագումարում, 1919 թ. մարտի 18—23-ին, ընդունվում ե կուսակցության նոր ծրագիրը, և մենք ուղղակի, առանց չարիքը խոսողանելուց վախենալու, այլ կամենալով այն բանալ, մերկացնել, անարգանքի սյունին դամել, ցանկանալով չարիքի դեմ կովկելու համար միտք և կամք, յեռանդ, գործողություն առաջ բերել, այդ ծրագրում իսուսում ենք «Խորհրդային կարգերի Աերում բյուրոկրատիզմի մասնակի վերածնուրյան մասին»:

Անցավ ելի յերկու տարի: 1921 թ. գարնանը, Խորհրդաների VIII Հպամագումարից հետո, վորը (1920 թ. գեկանեմբեր) քննիլ ե բյուրոկրատիզմի հարցը, մեկ չ համագումարից հետո (1921 թ. մարտին), վորը բյուրոկրատիզմի վերլուծության հետ ամենասերտ կապ ունեցող վեճերն երամիութում, մենք այդ չարիքն ել ավելի պարզ, ամելի վորոշ, մեր առաջ ել ավելի սպառնագին կանգնած ենք տեսնում: Վորոնք են բյուրոկրատիզմի տնտեսական արմատներում: Այդ արմատները զիմանակապես յերկու տեսակ են. մի կողմից զարդարած բուրժուազիան հատկապես բանվորների (մասսամբ նույն գյուղացիների) հեղափոխական չարժման դեմ կարիք ունի բյուրոկրատական, առաջին զինվորական, ապա դատական և այլ ապարատի: Մեղանում այդ չկա: Մեր գատարանները գասակարգային են, բուժժուազիայի դեմ ուղղված: Մեր բանակը դասակարգային ե, բուժժուազիայի դեմ կամնանած: Բյուրոկրատիզմը բանակում չե, այլ նրան սպասարկող հիմնարկներում: Մեղանում բյուրոկրատիզմը տնտեսական ուրիշ արմատ ունի՝ մանր արտադրողի ցիրուցան, մանրատված վիճակը, նրա աղջատությունը, անկուլտուրականությունը, ճանապարհաղբկու-

թյունը, անվրագիտությունը, հողագործության և արդյունաբերության միջև շրջանառության բացակայությունը, կազի և փոխագլեցության բացակայությունը գրանց միջև։ Հակայական չափով դա քաղաքացիական պատերազմի հետեամբ է։ Յերբ մեզ բլոկադայի եյին յենթարկել, պաշտրել ամեն կողմից, կտրել ամբողջ աշխարհից, հետո կըսրել հացավետ հարավից, Սիբիրից, քարածխից, մենք չեյինք կարող արդյունաբերությունը վերականգնել։ Մենք չպետք ե կանկ առնելինք «ուազմական կոմունիզմի» առաջ, չպետք ե վախենայինք ամենահուսահատական ծայրահեղությունից՝ կիսաքաղց ու կիսաքաղցից ե՛լ ավելի վատթար դոյության կղիմանանք, բայց և կպաշտպանենք, ինչ գնով ել լինի, չնայած ամենանկուր քայլայմանն ու շրջանառության բացակայությունը, կպաշտպանենք բանվորա-դյուզացիական իշխանությունը։ Յեվ մենք թույլ չտվինք, վոր մեզ վախեցնեն նրանով, ինչով վախեցրին եսերներին ու մենշեթիկներին (վորոնք վաստորեն մեծ մասամբ սարսափից ու վախեցած լինելուց յեյին գնում բուրժուազիայի հետեւից)։ Բայց այս, ինչ բլոկադայի յենթակա յերկրում, պաշարված բերդում, հաղթության պայման եր, իր բացասական կողմը յերեան հանեց հենց ճիշտ 1921 թ. դարնանը, յերբ ԱՄֆԽՀ տերիտորիայից վերջնականապես քչվեցին սպիտակ-դվարդիականների վերջին զորքերը։ Պաշարված ամրոցում կարելի յե և պետք ե ամեն մի շրջանառություն «փականքի տակ դնել»։ մասսաների հատուկ հերոսության ժամանակ այս կարելի յե կըել յերեք տարի չարունակ։ Այս բանից հետո մար արտադրողի քայլայումն ավելի ուժեղացավ, խորը արդյունաբերության վերականգնումն ավելի ձգձգվեց, հետաձգվեց։ Բյուրոկրատիզմն իրեն «պաշարման» ժառանդություն, իրեն մանր արտադրողի փոշիացած ու ճնշված վիճակի վերնաշենք, լիովին յերեան յեկալ։

Գետք ե կարողանանք չարիքն աներկյուղ խոստովանել, վորպեսզի ավելի հաստատուն կովենք նրա գեմ, վորպեսզի կրկին ու կրկին սկսենք սկզբից։ դեռևս շատ անդամ մեզ հարկադր ե լինելու մեր շինարարության բոլոր ասպարեզ-

ներում կրկին ու կրկին սկզբից սկսել, թերի թողածն ուղղելով, խնդրին մոռենալու զանազան ուղիներ ընտրելով։ Պարզվեց, վոր խոչոր արդյունաբերության վերականգնումը հետաձգվում է։ պարզվեց, վոր արդյունաբերության ու հոգագործության «փականքի տակ դրած» շրջանառությունն անտանելի յե այլևս առաջ նշանակում է, վոր պետք ե ուժ տալ ավելի մատչելիին, այն ե՝ մանր արդյունաբերությունը վերականգնելուն։ Գործին ողնել այդ կողմից, նեցուկ տալ պատերազմի ու բլոկադայի հետեւանքով կիսակործան շենքի այլ կողքին։ Ամեն կերպ և ինչ գնով ել լինի շրջանառությունը զարդացնել, առանց վախենալու կապիտալիզմից, վորովհետև զրա շրջանակները բավական նեղ են, բավական «չափավոր» են մեղանում (եկոնոմիկայի մեջ՝ կալվածատերիքի ու բուրժուազիայի սեփականազրկման միջոցով, քաղաքականության մեջ՝ բանվորա-դյուզացիական իշխանության միջոցով)։ Այս ե պարենային հարկի հիմնական միութը, այս ե նրա տնտեսական նշանակությունը։

Կուսակցական ու խորհրդային բոլոր աշխատողները պետք ե իրենց բոլոր ջանքերը, ամբողջ ուշադրությունն ուղղեն այն բանին, վորպեսզի տեղերում նահանդներում, Ե՛լ ավելի՝ զավաներում, ե՛լ ավելի շատ՝ զավառակներում ու դյուլերում մեծ նախաձեռնություն առաջ բերեն ու կյանքի կոչեն տնտեսական շինարարության դործում՝ թե կուր «փոքրիկ» միջոցներով, փոքր չափով դյուլացիական տնտեսությունը վերականգնելու, շրջակայքի մանր արդյունաբերության զարգացմանը նրան ողնելու տեսակետից։ Համապետական միասնական տնտեսական պլանը պահանջում է, վոր հենց այս լինի ուշադրության ու հոգացողության կենտրոնը, «հարվածային» աշխատանքի կենտրոնը։ Այս ասպարեզում ձևոք բերված վորոշ բարելավումն ամենից ավելի յե մոտ ամենալայնածավալ ու ամենախոր «հիմքին», այդ բարելավումը հնարավոր կրաքնի ամենակարճ ժամանակամիջոցում, ավելի յեռանդուն և ավելի հաջող կերպով դիմելու խոչը արդյունաբերությունը վերականգնելուն։

Մինչև այժմ պարենային աշխատողը մի հիմնական դե-

բեկտիլ դիտիր՝ հավաքի՞ր պարենմասնատրման 100%-ը։ Այժմ դիտեկտիլն այլ ե՛ հավաքի՞ր ամենալարճ ժամանակամիջոցում հարկի 100%-ը, այնուհետև հավաքի՞ր ելլ 100%, խոշոր ու մասն արդյունաբերության արդյունքների հետ փոխանակելով։ Ու հավաքի՞ր հարկի 75%-ն ու 75% ել (յերկրորդ հարյուրյակից) խոշոր ու մասն արդյունաբերության արդյունքների հետ փոխանակելով, նա ավելի ուղարկելու պիտական դորձ կիսատարի, քան նա, ով կհավաքի՞ր հարկի 100%-ն ու 55% ել (յերկրորդ հարյուրյակից) փոխանակությամբ։ Պարենային աշխատողի խնդիրը բարդանում է։ Մի կողմից գա Փիսկալ խնդիր եւ Հավաքի՞ր հարկի վորքան կարելի յեւ արագ, վորքան կարելի յեւ ռացիոնալ յեղանակով։ Մյուս կողմից՝ գա ընդհանուր տնտեսական խնդիր եւ Աշխատի՞ր այնպիսի ընթացք տալ կոռպերացիային, այնպիս ողնել մանր արդյունաբերությունը, այնպես զարգացնել նախաձեռնությունը, ձեռներեցությունը տեղեցում, վոր մեծանա ու ամրապնդվի հոգազործության և արդյունաբերության շրջանառությունը։ Մենք դեռևս շատ ու շատ վատ ենք կարողանում այդ բանն անել, աղացուց՝ բյուրօկատիզմը։ Մենք պետք ե չլախենանք խոստովաններուց, վոր այստեղ շատ բան կարելի յեւ ու պիտի ե սովորել կապիտալիստից։ Համեմատենք գործնական փորձի արդյունքներն ըստ նահանգների, ըստ գավառների, ըստ գավառակների, ըստ գյուղերի՝ մի տեղ մասնավոր կազխտալիստներն ու կապիտալիստիկները հասել են այս-ինչ արդյունքին։ Նրանց շահույթը մոտավորապես այսքան է։ Այս մի տուրք է, մի վճար, վոր տվել ենք «գիտության համար»։ Դիտության համար վճարելն ափսոս չե, միայն թե ուսումը կարդին ընթանա։ Իսկ առա հարեան տեղում կոռպերատիվ հանապարհություն հասել են այս-ինչ հետեւանքին։ Կոռպերատիվ հանապարհություն հասել են այս-ինչ հետեւանքին։ Կոռպերատիվ հարդին շահույթն այսքան է։ Իսկ յերրորդ տեղում դրստ պետական, զուտ կողմունիստական յեղանակով հասել են այս-ինչ արդյունքներին (ներկայումս այս յերրորդ դեպքը հաղմարդական բացառություն կլինի)։

Խնդիրը պետք ե լինի այն, վոր գործադիր կոմիտեյին

կից յուրաքանչյուր ըլջանային տնտեսական կենտրոն, յուրաքանչյուր նահանգական տնտեսական խորհրդակցություն, իրեն աստղին հերթի դործ, անմիջական փորոշեր իսկույն կազմակերպել «ըջանառության» զանազան տեսակ փորձեր ու սրտաեմներ՝ պարենային հարկը վճարվելուց հետո մնացած ավելցուկների վերաբերմաքք։ Միքանի ամիս հետո պետք ե ձեռքի տակ ունենալ դրսնական հետեւանքները՝ դրանք համեմատելու և ուսումնասիրելու համար։ Տեղական կամ ներմուծվող աղ, կենտրոնից ստացված նավթ, վայտամշակման տնայնագործական արդյունաբերություն, տեղական հումք գործուծող արհեստ, վոր ատլիս և միքանի, թեկուզ վոչ շատ ընտիր, բայց գյուղացուն անհրաժեշտ և ուսակար արդյունքներ, «կանոչ ածուխ» (փոքրիկ նշանակություն ունեցող տեղական ջրային ուժերի ողտագործումն ելեկտրիֆիկացիայի համար) և այն, և այն, այս բոլոր պետք ե դործի դնել ինչ գնով ել լինի, արդյունաբերության ու Հողագործության ըրջանառությունը կենդանացնելու համար։ Ու այս ասպարելում ամենամեծ հետեւանքների կհանի, թեկուզ մասնատիրական կապիտալիզմի միջոցով, թեկուզ նույնիսկ առանց կոռպերացիայի, առանց այդ կապիտալիզմի ուղղակի պետական կապիտալիզմի փոխարկելու, նա ալելի ողուտ կտա համառուսական սոցիալիստական շնարարության դործին, քան նա, ով Հկմտածի կոմունիզմի մաքրության մասին, ուղղակի անդամներ, կանոններ, հրահանգներ կորի պետական կապիտալիզմի ու կոռպերացիայի համար, բայց դործնականում շրջանառության դործը տեղից չի չափվի։

Այս կարող ե պարագությալ մասնատիրական կապիտալիզմը սոցիալիզմին ուժանուղակողի կերպում։

Բայց զա ամենելին պարագությունը, այլ տնտեսական տեսական միանութամայն անհերքելի փաստ։ Քանի վոր գոյաց թյուն ունի մանր-պյուղացիական յերկիր, վորի տրամադրությունը առանձնապես քայլքայլած է, վորը նոր և աղատվել պատերազմից ու բլոկադայից և վորը քաղաքականապես զեկավարվում ե ուղղութարիստի ձեռքսվ, իսկ առ իր ձեռքում

և պահում արանսպարտն ու խոշոր արդյունաբերությունը, ավա այս նախադրյալներից միանգամայն անխուսափելի կերպով բղխում ե այն, զոր նախ՝ ներկա ըովերում առաջնակարգ նշանակություն ունի տեղական շրջանառությունը և յերկրորդ՝ մասնավոր-անտեսատիրական կազմիտալիզմի միջոցով սոցիալիզմին աջակցություն ցույց տալու հնարավորությունը (ել չենք խոսում պետական կազմիտալիզմի մասին):

Ավելի քիչ վիճենք բառերի մասին: Այդ կոզմից մենք մինչև այժմ ել անշափ շատ ենք մեղանչում: Հարկավոր և ավելի բազմազանություն մտցնել գործնական փորձի մեջ և այդ փորձն ավելի շատ ուսումնասիրել: Լինում են այնպիսի պայմաններ, յերբ նույնիսկ ամենափոքրիկ մասշտաբով տեղական աշխատանքի որինակելի կազմակերպումն ավելի կարևոր պետական նշանակություն ունի, քան կենտրոնական պետական աշխատանքի շատ ճյուղեր: Յեզ մեղանում ճիշտ ներկա մոմենտին ընդհանրապես գյուղացիական անտեսության վերաբերմամբ և մասնավորապես գյուղատնտեսական արտադրության ավելցուկներն արդյունաբերության արտադրանքների հետ փոխանակելու վերաբերմամբ պայմանները հենց այդպես են: Այս ուղղությամբ թեկուղ մի գավառակի համար գործն որինակելիորեն կազմակերպելն ավելի խոշոր համապետական նշանակություն ունի, քան այս կամ այն ժողովրդական կամիսարատի «որինակելի» բարելավումը: Վորովհետեւ մեղանում, յերեք ու կես տարվա ընթացքում, կենտրոնական ապարատն այնքան է կազմագործի, զոր կարողացել և վորոշ վնասակար ծանրաշարժություն ստանալ, այդ ապարատը մենք չենք կարող նշանակալից չափով և բավական արագ բարելավել, չգիտենք, թե ինչպես պիտի անել այդ: Այդ ապարատն արմատապես բարելավելու համար, թարմ ուժերի նոր հոսանք առաջացնելու համար, բյուրոկրատիզմի դեմ հաջողությամբ կավելու համար, վնասակար ծանրաշարժությունը հաղթահարելու համար ող-

նությունը պետք ե զա տեղերից, ցածրերից, փոքրիկ գոմբջություններ որինակելի կերպով կազմակերպելուց, բայց հատկապես, «ամբողջությունը», այսինքն՝ վո՛չ թե մի տընտեսությունը, անտեսության մի ճյուղը, վո՛չ թե մի ճեռնարկությունը, այլ թեկուղ մի փոքրիկ տեղի բալր անտեսական հարաբերությունների գումարը, ամբողջ անտեսական շրջանառության գումարը, կազմակերպելուց:

Մեզանից նրանք, ովքեր դատապարտուած են կենտրոնական աշխատանքի մեջ մնալու, կշարունակեն թեկուղ համեստ, անմիջականորեն մատչելի չափով ապարատը բարելավելու և բյուրոկրատիզմից մաքրելու գործը: Բայց այս տեսակետից զլիսավոր ողնությունը գալիս ե ու կդա տեղերից: Մեզանում, —վորքան յես կարողանում եմ դիտել, —տեղերում գործն ընդհանրապես ավելի լավ դրության մեջ ե, քան կենտրոնական պահպանակի յե, վորովհետեւ բյուրակրատիզմի չարիքը, բնականաբար, համակենտրոնանում ե կենտրոնում: Մուկվան չի կարող այդ տեսակետից հանրապետության ամենավատ քաղաքն ու ընդհանրապես ամենավատ «տեղը» չինել: Տեղերում միջինից դեպի յերկու կողմեն ել շեղումներ կան. շեղումները դեպի վատ կողմն ավելի հազարեկ են, քան դեպի լավ կողմը: Դեպի վատ կողմը շեղումներն այն չարաբերություններն են, վոր կատարում են կոմունիստների մեջ լիցեված հին շինումնիները, կարմածատերերը, բուրգուաններն ու այլ սրբիկանները, վորոնք յերեմն զգելի անկարգություններ, այլանդակություններ և անարդանքներ են գործում գյուղացիության վերաբերմամբ: Այսուղ տեսորիստական զում և հարկավոր՝ տեղնուածեղը դատապատճ և առանց այլհայրության գնդակահարություն: Թող Մարտովները, Զերնովներն ու գրանց նման անկուսակցական քաղաքները իրենց կուրծքը ծեծն և աղաղակեն: «Փառարանում եմ քեզ, տե՛ր, այն բանի համար, վոր յես «Նրանց» նման չեմ, վոր չեմ ընդունել և չեմ ընդունում տեսողը»: Այդ հիմարները «տեսոր չեն ընդունում», վորովհետեւ բանվորներին ու գյուղացիներին հիմարացնելու

գործում նրանք սպիտակ-դվարգիականներին լակեյություն անող գործակիցների դեր են ընտրել իրենց համար։ Եսերն ու մենչեւիները «տեսոր չեն ընդունում», վորովհան նրանք մասսաներին, «սոցիալիզմ» դրոշի ներքո, սպիտակ-գվարդիականների տեսորի տակ զցելու դերն են կատարում։ Այդ ապացուցել ե կերենսկիականությունն ու կոռոնիլովականությունը Թուսատանում, կուչականությունը Սիրիում, մենչևիդմբը Վրաստանում, այդ ապացուցել են Յերկրորդ ու «յերկու ու կես»<sup>1</sup> ինտերնացիոնալների հերոսները Ֆինլանդիայում, Հռոնդարիայում, Ալմարիայում, Գերմանիայում, Իտալիայում, Անգլիայում և այլն։ Թող սպիտակ-դվարդիական տեսորի լակեյություն անող գործակիցներն իրենց դուրանեն, վոր իրենք ժխտում են ամեն մի տեսոր։ Իսկ մենք կշարունակենք ասել ծանր, բայց անվիճելի ճշմարտությունը՝ այն յերկրներում, վորոնը 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմից հետո անդուր ճգնաժամ են ապրում, փորսեղ հին կապերը քայլայլած են, և զասակարգային կոիվը սրված, —իսկ այդ գրության մեջ են աշխարհի բալոր յերկրները, —այդ յերկրներում, Հակառակ կեղծալորների ու ֆրազյորների ասածներին, առանց տեսորի կառավարվել չի կարելի։ Կամ ամերիկական, անդիքական (Իռլանդիա), իտալական (Փաշիստներ), գերմանական, հռոնդարական ու այլ Փասոնի սպիտակ-դվարդիական, բուրժուական տեսոր, և կամ կարմիր, պրոլետարա-

<sup>1</sup> 2½ ինտերնացիոնալը հիմնվել է Հեղտփոխական բանվորներին խռովությունում 1921 թ. փետրվարին սոցիալ-դեմոկրատիայի «Ճախ» առաջնորդների կողմից՝ նախառակ ունենալով պահելու բանվորական շարժումը յենտրիստական դիրքերի վրա և հակագործելու իստունդիստական ինտերնացիոնալի ազգեցությանը։ Խոսքով թույլ տուղ, վոր պրոլետարիատը գրավի իշխանությունը, 2½ ինտերնացիոնալը գործով պաշտպանում եր պրոլետարիատի յնթարկումը բուրժուազիային և պայքար եր մզում նորհրդային հանրապետություն գեմ։ Բոլոր կարեռագույն հարցերում 2½ ինտերնացիոնալը կանքած էր և ինտերնացիոնալի դիրքերի վրա, ունկի վորը հօրիթ և մերժականը վերագրածավ 1920 թ. մայիսին։

կան տեսոր։ Միջին ճանապարհ չկա, «յերբորդը» չկա և չի ել կարող լինել։

Դեպի լավ կողմը յեղած շեղումներն են՝ հաջող կովովը բյուրոկրատիզմի դեմ, բանվորների ու գյուղացիների կարիքներին ամենամեծ ուշադրությամբ վերաբերվելը, տնտեսությունն ամենամեծ հոգատարությամբ վոտքի կանգնեցնելը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հողագործության ու արդյունաբերության միջև տեղական ընջանառության զարգացումը։ Դեպի լավ կողմը յեղած, այս շեղումները թեև ավելի հաճախ են պատահում, քան դեպի վատ կողմը յեղած շեղումները, բայց, այսուամենայնիվ, նրանք հազվադեպ են։ Սակայն նրանք կան։ Քաղաքացիական պատերազմի ու զրկանքների մեջ կոփված, նոր, յերետարարդ, թարմ կոմունիստական ուժեր պատրաստելու գործը տեղերտամ ամենուրեք առաջ և գնում։ Մենք գեռևս շատ ու շատ քիչ բան ենք անում այդ ուժերը սիստեմատիկ ու անշեղ կերպով ցածրից վերև տեղաշարժելու համար։ Այդ կարելի յեւ և անհրաժեշտ ե անշեղ ավելի ընդարձակ չափով ու ավելի աննկուն կերպով։ Միքանի աշխատողների կարելի յեւ և պետք ե հանել կենտրոնական աշխատանքից և տեղական աշխատանքի դնել։ Նրանք, իբրև գալառների և գալառակների դեկալարներ, այսուղ անտեսական աշխատամատիքը ամբողջությամբ վերցրած որինակելի կերպով կազմակերպելով, հոկայական ողուտ կտան և վորմեն կենտրոնական Փունկցիայից ավելի կարեսը համապետական գործ կաստարեն։ Վորովհետև որինակելի կերպով կազմակերպված գործը կլինի աշխատողների մի տնկարան և որինակ վերջնելու մի նմուշ, վորն ընդորինակելն արդեն համեմատաբար գժվար չի լինի, իսկ մենք կենտրոնից կիարողանալնք նպաստել այն բանին, վոր որինակելի որինակն «ընդորինակելու» գործն ամեն տեղ լայն չափով տարածվի ու պարտադիր դամանա։

Պարենային հարկը վճարելուց հետո մնացած ավելցուկներ և մանք, առավելապես տնայնական արդյունա-

բերության միջնորդ Հողագործության և արդյունաբերության միջև կատարվող «շրջանառությունը» զարգացնելու համար, անհրաժեշտ է տեղերի՝ իր բուն եյությամբ ինքնուրույն, բանիմաց, խնդրո նախաձեռնություն, այդ պատճառով ել գալիքառական ու զարգառակային աշխատանքի սրբանակելի դրվածքը ներկայումս համապետական տեսակետից միանգամայն բացառիկ կարևորություն և ստանում։ Արքակ, զիմնորանական գործում, վերջին լեհական պատերազմի ժամանակ, մենք չվախեցանք բյուրոկրատական հիերարխիացից նահանջելուց, չվախեցանք «աստիճան ցածրացնելուց», չվախեցանք հանրապետության Հեղափոխական Ռազմական Խորհրդի անդամներին (այդ բարձր կենտրոնական պաշտոնում պահելով հանդերձ) ցածր պաշտոնի փոխադրելուց։ Իսկ այժմ ինչո՞ւ Համառուսական ԿԳԿ-ի անդամներից, կամ ուրիշ կոլեկտիվների անդամներից կամ ուրիշ բարձրաստիճանն ընկերներից վոմանց չփոխադրենք նույնիսկ գալառային, նույնիսկ գալառակային աշխատանքի։ Մենք հո իրոք այնքան «բյուրոկրատական չե՞նք գարձել», փոք այդպիսի բաներից «քաշվենք»։ Յեվ մեզանում տասնյակներով կենտրոնական գործիքներ կդառնվեն, վորոնք հոժարությամբ ընդուած կդնեն այդ գործին։ Իսկ ամբողջ հանրապետության տնտեսական շինարարության գործը չափազանց կշահավի դրանից, և որինակելի գալիքառակները կամ որինակելի գալիքաները վո՞չ միայն խոչոր, այլ ուղղակի վճռական, պատճառական դեր կիսազան։

Ի միջի այլոց։ Իբրև փոքրիկ, բայց, այնուամենայնիվ, նշանակություն ունեցող հանգամանք, պետք է մատնանշել, վոր սպեկուլացիայի գեմ կովելու հարցի սկզբունքային դրվածքի մեջ անհրաժեշտ է փոփոխություն մտցնել։ Պետական վերահսկողությունից չխռուափող «կանոնավոր» առևտրին մենք պետք ե աջակցենք, մեզ ձեռնտու յե այն զարգացնել։ Իսկ սպեկուլացիան չի կարելի տարբերել «կանոնավոր» առևտրից, յեթև սպեկուլացիան քաղաքատնտեսության իմաստով հասկանանք։ Առևտրի աղատությունը կատա-

տալիքը և, կապետակալումն սպեկուլացիա յէ, —այս բանի  
հանդեմ աչք փակելը ծիծաղելի յէ:  
Ի՞նչ անհնգ: Հայուարարենք, վոր սպեկուլացիան ան-  
պատրիժ մնա:

Վո՛չ: Հարկավոր և վերաբննել ու վերամշտկել սպեկու-  
լացիային վերաբերող բոլոր որենքները, պատժելի հայուա-  
րարելով (և իրապես առաջանից յետապատճեկ այլի խիստ  
հետապնդելով) ամեն մի հավատակության ու ամեն մի ուղ-  
ղակի կամ անուղղակի, բացահայտ կամ քողարկված խո-  
սափում պետական վերահսկողությամբ, հայությունից.  
հաշվառումից: Հարցը չենց այսպես գներով (ժողկոմիոր-  
հում տրղեն սկսված և աշխատանք, այնինքն՝ ժողկոմիորհու-  
արգեն կարգադրել և սպեկուլացիային վերաբերող որենք-  
ները վերաբննելու աշխատանքն սկսել), մենք կհամնենք այն  
բանին, վոր կապիտալիզմի, վորոշ չափով անխուսափելի և  
մեկ համար անհրաժեշտ, զարգացումը կուղևնք դեպի պե-  
տական կապիտալիզմի հունը:

Գ.Ա.Հ.Ա.Ք.Ա.Կ.Ա. Ա.Մ.Փ.Ո.Փ.Խ.Մ.Ն.Ե.Ր ՈՒ ՀԵՏԵՎ.ՈՒ-  
Թ.Յ.ՈՒ.Ն.Ն.Ե.Ր

Յես դեռ պիտք է նաև չոշաբեմ, թեկուզ համառատա-  
կի, քաղաքական իրադրությունը, ինչպես վոր նա կազմվել  
ու փոփոխության և յնթարկել վերևում գծած եկոնոմի-  
կայի կազմակցությամբ:

Արդեն առվեց, վոր 1921 թ. մեր հեղումբիկայի համա-  
կան գծերը նույնն են, ինչ վոր կային 1918 թ.: 1921 թ.  
դարձնանք, պլիսալորապահն անքերության և անսառունների կո-  
տորվելու պատճառով, չափազանց սրվեց պյուղացիության  
դրությունը, վորն ազանց այս հիշ չափազանց ծանր եր պա-  
տերազմի ու բլիհադայի հետևանքով։ Այդ սրվելու հետե-  
վանքը յեղան քաղաքական տատանումները, վորոնք, ընդ-  
հանրապես ասած, մանր արտադրողի խեկական «բնույթն» են  
կազմում։ Այդ տատանումների ամենացայտուն արտահայ-  
տությունը կրոնչութափով խռովաթյունն եր։

Կրոնշտադտի դեպքերի մեջ ամենից բնորոշը հենց մանր-  
բուրժուական տարերքի տատանումներն ելին։ Լիովին ձևա-  
կերպված, պարզ, վորոշ բան չառ քիչ կա։ «Ազատության»,  
«առեւտրի աղատության», «ճորտությունից աղատադրե-  
լու», «առանց բոլշևիկների Խորհուրդներ» ունենալու կամ  
Խորհուրդների վերընտրության, կամ «կուսակցության դիլ-  
տատությայից» աղատվելու և այլն, և այլն, ու սրանց նման  
մշուշապատ լոգունդներ։ Թե՛ մենչեւիկները և թե՛ հսկները  
հայտարարում են, վոր Կրոնշտադտի շարժումն «իբրևնցն» է։  
Վիկտոր Զերնովը սուրհանդակ է ուղարկում Կրոնշտագտ  
այդ սուրհանդակի առաջարկով մենչեւիկ Վալվը, Կրոնշտագ-  
տի առաջնորդներից մեկը, Կրոնշտադտում քվեարկում և  
«Սահմանադիր ժողովի» ուժտին։ Ամբողջ սպիտակ-գվար-  
դիականությունը բովելապես զորահավաքի յե՛ յնթարկ-  
վում «Կրօնշտագտի համար», կարելի յե՛ առել, ուղիուհե-  
ռադրական արագությամբ։ Կրոնշտադտի սպիտակ-գվար-  
դիական գինվորական մասնագետները, մի շարք մասնագետ-  
ներ, և վոչ թե միայն Կողղովսկին, ծովով Որանիենբաում  
գորք հանելու ալլան են մշակում, մի ալլան, վոր վա-  
խեցրեց եսերական-մենչեւիկական տատանմող անկուսակցա-  
կան մասսային։ Արտասահմանի 50-ից ավելի ուռասկան  
սպիտակ-գվարդիական լրագրեր կատաղի յեռանդով պայ-  
քար են մղում «Կրօնշտագտի համար»։ Խոշոր բանկերը,  
ֆինանսական կապիտալի բոլոր ուժերը հանդանակություն  
են սկսում Կրոնշտագտին ողնելու համար։ Բուրժուազիայի  
և կարվածատերերի խելոք առաջնորդը՝ կադետ Միլյուկո-  
վը, տիմար Վիկտոր Զերնովին ուղղակի հերպով (իսկ Կրոն-  
շտագտի հետ կապ ունենալու համար Պիտերի բանտում  
նատած մենչեւիկ Դանին և մենչեւիկ Ռոժեկովին կողմնակի  
կերպով) համբերությամբ բացատրում ե, վոր Սահմանա-  
դիր ժողովը շտապեցնելու վոչ մի կարիք չկա, վոր կարելի  
յե՛ և պետք ե արտահայտվել Խորհրդային իշխանության ոգ-  
տին, միայն թե առանց բոլշևիկների։

Իհարկե, գժվար բան չե ավելի խելոք լինել այնպիսի

ինքնասիրահար տիմարներից, վորպիսին Զերնովն ե, մանր-  
բուրժուական ֆրազի հերոսը, և կամ վորպիսին Մարտովն  
ե, «մարքսիզմի» հետ կեղծ նմանություն ունեցող քաղքե-  
նական ուժքությունի ասղետը։ Խակավես բանն այն չե, վոր  
Միլյուկովն, իրու անհատ, ավելի խելոք ե, այլ այն, վոր  
խոչոր բուրժուազիայի կուսակցական առաջնորդը, իր գտ-  
սակարգային դրության չորհիվ, ավելի պարզ ե աեսնում,  
ավելի լավ ե հասկանում գործի դասակարգային եյտությու-  
նը և քաղաքական փոխհարաբերությունները, քան մանր  
բուրժուազիայի առաջնորդները, Զերնովներն ու Մարտով-  
ները։ Վորովհետեւ բուրժուազիան իրոք մի դասակարգային  
ուժ ե, վորը կապիտալիզմի ժամանակ անխուսափելի կեր-  
պով իշխում ե թե՛ միապետության մեջ ու թե՛ աշխարհի  
յերեսին յեղած ամենագենուկրատական հանրապետության  
մեջ, նույնպես անխուսափելի կերպով ուղարկով համաշ-  
խարհային բուրժուազիայի ժամանակիությունից։ Խսկ մանր  
խարհային բուրժուազիայի Յերկրորդ ու կես»  
բնուերնացիոնալի բոլոր հերոսները, զործի անտեսական ե-  
յությամբ, ուրիշ բան չեն կարող լինել, քան դասակարգա-  
յությամբ։ արտահայտություններ։ այսուղից են ծա-  
յին անզորության արտահայտություններ։ 1789 թ.  
գումար տատանումները, Փրազը, անձարակությունը։ 1789 թ.  
մանր բուրժուաները գեռ կարող եյին մեծ հեղափոխական  
լինել, 1848 թ. նրանք ծիծակելի ու վոզրմելի եյին, 1917—  
1921 թվականներին նրանք իրենց խսկական դերով ռեակ-  
ցիայի զզմելի գործակիցներն են, ուղղակի նրա լակեցները,  
ժիկնույնն ե, թե Զերնովներ ու Մարտովներ են կոչվում  
նրանք, թե Կառցիիներ, Մակրոնարդներ ե այլն և այլն։

Յերր Յեռլինում հարաբերակվող իր ժուռնալում Մար-  
տովը հայտարարում ե, վոր իրը թե Կրոնշտագտը վո՛չ մե-  
տովը հայտարարում ե, վոր իրը թե Կրօնշտագտը վո՛չ մե-  
տովը հայտարարում ե, վոր այս մենչեւիկների լողունգներն ե կիրառում, այլև ուղա-  
րական մենչեւիկների լողունգներն ե կիրառում, այլև ուղա-

կերն ե: Յեկե՛ք ողարզապես չտևոնելու տանք այն փաստը, վոր բոլոր իսկական սպիտակ-զվարդիականները վողջունում եյին կրոնշտագացիներին և Կրոնշտագտին ողնելու համար բանկերի միջոցավ Փոնդեր Եյին Հավաքում: Միլյուկովն արդարացի յե Զերնովների ու Մարտովների հանդեպ, վորովհետև դրսնորում ե իսկական սպիտակ-զվարդիական ուժի, կապիտալիստների ու կալվածատերերի ուժի իսկական տակտիկան՝ յեկե՛ք ոժանդակենք, ուժն ուղղում ե լինի, նույնիսկ անարխիստներին, ինչպիսի Սորչովային իշխանություն ուղղում ե լինի, միայն թե տապահենք բուշեկներին, միայն թե իրականացնենք իշխանության տեղաշարժը: Բալորովին միենույն ե՝ դեպի աջ, թե դեպի ձախ, դեպի մենաշեմերը, թե դեպի անարխիստները, միայն թե իշխանությունը տեղաշարժենք բուշեկներից դենք. իսկ մնացածը, —մնացածը «մենք», Միլյուկովներս, «մենք», կապիտալիստներս ու կալվածատերերս «ինքներս» կանենք, անարխիստեկներին, Զերնովներին, Մարտովներին թաթալու ուալով կքչենք, ինչպիս Սիրիում արինք Զերնովների ու Մայսկիների վերաբերմամբ, ինչպիս Հունդարիայում արինք հունդարական Զերնովների ու Մարտովների վերաբերմամբ, ինչպիս Դերմանիայում արինք Կառուցիու վերաբերմամբ, ինչպիս Վիեննայում արինք Ֆր. Ագլերների ու Ընկ. վերաբերմամբ: Բոլոր յերկրներում, բոլոր հեղափոխությունների ժամանակ իսկական, գործարար բուրժուազիան տառնյակ անդամ այլ քաղքենիական Նարցիսներին՝ մենչեկներին, ևսերներին, անկուսակցականներին, Հարյուրներով և Հիմարացրելու ու վոնդել: Այս ապացուցած ե պատմությունը: Այս ստուգված և փառատերով: Նարցիսները կշաղակրատեն: Միլյուկովներն ու սպիտակ-զվարդիականությունը դործ կկատարեն:

Միայն թե իշխանությունը բուշեկներից դենը տեղաշարժվի, բոլորովին միենույն ե, միեխ դեպի աջ, թե միեչ դեպի ձախ, իսկ մնացածը կարդի կընկնի, այս հարցում Միլյուկովը միանդամայն իրավացի յե: Այդ մի գա-

սակարդային ճշմարտություն ե, վորը հաստատված ե բոլոր յերկրների հեղափոխությունների, միջնադարից հետո յեկող նոր պատմության ամբողջ բազմադարյան ժամանակաշրջանի ամբողջ պատմությամբ: Մանրատված մանր արտադրողին, գյուղացուն կամ բուրժուազիան և միացնում տընտեսապես ու քաղաքականապես (այդպես ե յեղել միշտ կապիտալիզմի ժամանակ, բոլոր յերկրներում, նոր ժամանակի բոլոր հեղափոխությունների ընթացքում, կապիտալիզմի ժամանակ հենց միշտ ել այդպես կընի) և կամ մըրուետարբատը (այդպես ե յեղել սազմնային ձեռով ամենակարծ ժամանակամիջոցում նոր պատմության ամենամեծ հեղափոխությունների ամենաբարձր գարգացման ժամանակ, այդպես յեղավ 1917—1921 թվականներին Ռուսաստանում՝ ամելի զարգացած ձեռվ): «Յերբորդ» ճանապարհի մասին, «յերպարդացած ձեռվ»: «Յերբորդ» ճանապարհի մասին, «յերպարդ ուժի» մասին, շաղակրատել ու յերազել կարող են նաքնասիրահար Նարցիսները միայն:

Մեծադույն դժվարությամբ, կատաղի կովի մեջ բուշեկները պատրաստեցին կառավարելու ընդունակ պրոլետարիատի ավանդաբարը, ստեղծեցին և պաշտպանեցին պրոլետարիատի գիլկոտառութան, և չորս տարվա գործնական կյանքից հետո, փորձով ստուգելուց հետո, Ռուսաստանում լրասակարգային ուժերի հարաբերակցությունը սրարդից ել պարզ դարձավ: Միակ հեղափոխական դասակարգի պաղպատահակուած ավանդաբարդ, մանր-բուրժուազիան տառանգող տարեքը, արտասահմանում տափ կացած և համաշտանության բուրժուազիայի ոժանդակությունը վայելող Միլյուկովներ, կապիտալիստներ, կալվածատերեր: Հարցը պարզից ել պարզ ե: «Իշխանության»/ամեն մի «տեղաշարժ» միայն վերջինները կողտապործեն և կարող են ոգտագործել:

1918 թ. վերջիշխալ բրոցյուրում դրա մասին ուղղակի առանձինը՝ «գլխավոր թշնամին» «մանր-բուրժուազիան տառերքն ե»: «Կամ մենք նրան կենթարկենք մեր վերահսկու-

վրեալ կերպով կտապալի բանվորական իշխանությունը, ինչպես տապալեցին հեղափոխությունները նապոլեոններն ու Կալենյակները, վորոնք աճում եյին հենց այդ ժանր-սեփականատիրական հողի վրա: Այսպես ե դրված Հարցը: Միայն այսպես ե դրված Հարցը» (1918 թ. մայիսի 5-ի բրոշյուրից հմմտ. վերևը):

Մեր ուժն ե՝ գոյություն ունեցող թե՛ ոռոսական ու թե՛ մէջազդային բոլոր գտասակարգային առկա մէծությունների պարզ ու զգաստ հաշվառումը, և ապա դրանից բղխող յերկաթե յեռանդը, հաստատակամությունը, վճռականությունն ու անձնուրացությունը պայքարում: Թշնամիներ շատ ունենք, բայց նրանք բաժան-բաժան են կամ չդիտեն, թե ինչ են ուզում (ինչպես բոլոր մանր բուրժուաները, բոլոր Մարտովներն ու Զերնովները, բոլոր անկուսակցականները), բոլոր անարխիսանները: Իսկ մենք միացած ենք իրար հետ՝ ուղղակի, բոլոր յերկրների պրոլետարների հետ՝ անուղղակի կերպով. մենք գիտենք, թե ինչ ենք ուզում: Յեվ այս պատճառով ել մենք անպարտելի յենք հռմաշխարհային մասշտաբով, թեեւ այդ ամեննեին չի բացառում այս կամ այն ժամանակի ընթացքում առանձին պրոլետարական հեղափոխությունների պարտության համարվությունը:

Իդուր չե, վոր մանր-բուրժուական տարերքը տարերք ե կոչվում, վորովհետեւ այլ ամենից ավելի անձև, անորոշ, անշեխտակից մի բան և իրոք: Մանր բուրժուապիայի նարցիսները կարծում են, վոր «ընդհանուր քիեւարկությունը» կապիտալիզմի ժամանակ վոչնչացնում և մանը արտադրողի բնույթը, մինչդեռ իրոք այդ քիեւարկությունն ոգուում և բուրժուապիային յեկեղեցու, մամուլի, ուսուցչության, վոստիկանության, զինվորականության, հաղար տեսական տնտեսական ճնշման միջոցով, ոգնում և բուրժուապիային՝ ցիրուցան մանր արտադրողներին յենքարկելու

իրեն: Քայջայումը, կարիքն ու դրության ծանրությունը տատանումներ են առաջ բերում այսոր դեպի բուրժուապիան, վաղը գեղի պրոլետարիատը: Միմիայն պրոլետարիատի կովկած ավանդաբանն ե ընդունակ տատանումներին դժմանալու և տատանումներին դեմ կանգնելու:

1921 թ. գարնան դեպքերը կրկին ու կրկին ցույց տվին եսերների ու մենչեկիների գերը. նրանք ողնում են տատանվող մանր-բուրժուական տարերքին՝ բոլշեվիներից ընկըրկելու, «իշխանության տեղաշարժ» կատարելու հողուտ կապիտալիստների ու կալվածատերերի: Մենշևիկներն ու եսերներն այժմ սպարել են «անկուսակցականների» գույնով ներկվել: Այս ապացուցված և լիովին: Յեվ այժմ միայն ախմարները կարող են այդ չտեսնել, չհասկանալ, վոր մենք չենք կարող թույլ տալ, վոր մեղ հիմարացնեն: Անկուսակցական կոնֆիերենցիանները կուռք չեն: Նրանք զնահատելի յեն, յեթե հնարակորություն են տալիս մոտենալու այս մասսային, վորին վոչ մի ձեռք չի կուել, միլիոնավոր աշխատավորների այն խավերին, վորոնք քաղաքականությունից զուրս են կանգնած. սակայն նրանք՝ անկուսակցական կոնֆիերենցիանները, վնասակար են, յեթե «անկուսակցականների» գույնով ներկված եսերներին ու մենչեկիներին պլատֆորմ են տալիս: Այդպիսի մարդիկ նպաստում են խոսվություններին, ոգնում են սպիտակ-պվարդիականությանը: Թե՛ բացահայտ և թե՛ անկուսակցականների գույնով թյանը: Թե՛ բացահայտ և թե՛ անկուսակցականների արտասահմանյան ժուռնալները, սպիտակ-պվարդիականների կողքին. մենք Մարտովին հոժարությամբ թողինք արտակարգացնեածաման), բայց վոչ թե անկուսակցական կոնֆիերենցիաններ, Մասսանների տրամադրությունն ստուգելու, նրանց մոռը: Մասսանների տրամադրությունն ստուգելու, նենալու ուրիշ ճնշապարհներ կարելի յեւ և պետք ե գտնել: Թող զնա արտասահման, ով ուզում է պրայածնենտարիում, Սահմանադիր ժողով, անկուսակցական կոնֆիերենցիա խաղաղ գնացելք այսուեղ, Մարտովի մոտ, Համեցելք ինորիմ, զալ. զնացելք այսուեղ, Մարտովի մոտ, Վրայիչությունը, Վրանդելի

գինվորներից հարցուսիրը արեք զեմոկրապտիայի այդ գրալիչության մասին, չորս արեք: Իսկ մենք ժամանակ չունենք տեսնելու, թե ինչպես են «կոնֆերենցիաներում» «ոռպողիցիա» խաղում: Մենք ըջապատված ենք համաշխարհային բուրժուազիայի կողմից, վորը դարանակալ սպասում ե տատանման յուրաքանչյուր մոմենտին, վորակազի հետ դարձնի «յուրայիններին», վորակազի վերականգնի կալվածատերին ու բուրժուազիային: Մենք կշարունակենք բանապում պահել եսերներին ու մենչեւիներին, միմնույն և, բացահայտ լինեն նրանք, թե «անկուսակցական» գույնով ներկված:

Մենք բոլոր միջոցներով ավելի սերտ կազեր կհաստատենք աշխատավորների այն մասսայի հետ, վորին չե շոշափել քաղաքականությունը, բացի այն միջոցներից, վորոնք ազատ առաջարեզ են տալիս մենշևիկներին ու սոցիալիստ-կեղափոխականներին, ազատ առաջարեզ են տալիս այն տատանումներին, վորոնք նպաստավոր են Միլյուկովին: Մենք առանձին յեռանով դեպի խորհրդային աշխատանք կմղենք, առաջին չերթին դեպի անտեսական աշխատանք կմղենք, առաջուրավոր ու հարյուրավոր անկուսակցականների, իսկական անկուսակցականների, վորոնք մասսայից, շարքային բանվորներից ու զյուղացիներից են դուրս յեկել, և վոչ թե նրանց, ովքեր անկուսակցական «գույնով են ներկվել», վորպեսզի մենշևիկյան ու եսերական սերտած նակազներ կարդան, վորոնք այնքան ձեռնուու յեն Միլյուկովին: Մեզանում տշխատում են հարյուրավոր ու հազարավոր անկուսակցականներ, վորոնցից տանյակներն ամենակարևոր ու պատասխանատու պաշտոններում: Պետք ե սրանց աշխատանքն ել ավելի ստուգել: Պետք ե նոր ստուգման համար ավելի շատ առաջարեզ քաշել հաղարավոր ու հազարավոր շարքային աշխատադիրի, վորձել սրանց, սիստեմատիկ ու անշեղ կերպով, հարյուրավորներով առաջ քաշել նրանց դեպի բարձր պաշտօնները՝ փորձով ստուգելու հիման վրա:

Մեզանում կոմունիստները մինչև այժմ լավ չեն կարող անում հասկանալ կառավարելու իրենց խկական խնդիրը. նրանք պետք ե վո՛չ թե աշխատեն, վոր «ամեն բան իրենք» կատարեն, ուժից ընկնելով ու գործը չհասցնելով, քան դործ հանձն առնելով ու վոչ մեկը չվերջացնելով, այլ ստուգեն տասնյակ ու հարյուրավոր սպականների աշխատանքը, գործն այնպես կարգավորեն, վոր ներքեց, այսինքն՝ իսկական մասսան ստուգի սրանց կատարած աշխատանքը. կոմունիստները պետք է ուղղություն տան աշխատանքին և սովորեն այն մարդկանցից, վորոնք գիտություն ունեն (մասնագետներ) ու խոշոր անտեսությունը կարգի բերելու փորձ (կապիտալիստներ): Խելոք կոմունիստը չի վախենա զինվորական մասնագետից բան սովորելուց, թեև զինվորական մասնագետների <sup>9</sup> ընդունակ ե ամեն մի զեպօւմ դավաճաններու: Խելոք կոմունիստը չի վախենա կապիտալիստից բան սովորելուց (այդ կապիտալիստը խոչոր կոնցեսիոներ-կապիտալիստ կլինի, թե առեւրական կոմիսիոներ, թե մանր կապիտալիստիկ-կոոպերատոր և այլն, այդ մենույն ե), թեև կապիտալիստը զինվորական մասնագետից ավելի լավ չե: Սովորեցինք Կարմիր բանակում բոնել դավաճան զինվորական մասնագետներին, ջոկել ազնիվներին ու բարեխիզմներին, ընդհանրապես ու ամրողությամբ վերցրած՝ սովագործել հազարավոր ու տասնյակ-հազարավոր զինվորական մասնագետների: Սովորում ենք նույն ամել (յուրահատուկ յեղանակով) ինժեներների, ուսուցիչների վերաբերմամբ, թեև այդ անում ենք շատ ավելի վատ, քան Կարմիր բանակում (այնտեղ Դենիկինն ու Կոլչակը մեզ լավ ելին շտագեցնում, հարկադրում ելին ավելի արագ, ավելի յեռանգով ու ավելի կարգին սովորելու): Սովորենք անել նույնը (գարձյալ յուրահատուկ ձևով) կոմիսիոներ-առեւրականների վերաբերմամբ, պետության համար զնումներ կատարողների վերաբերմամբ, կոոպերատոր-կապիտալիստիկների վերաբերմամբ, կոնցեսիոներ-ձեռնարկուների վերաբերմամբ և այլն:

Բանկոր ու գյուղացի մասսային հարկավոր և իր վճակի անմիջական բարելավումը: Նոր ուժիրին, այդ թվունակ անկուսակցականներին, ոգտակար աշխատանքի զնելու մենք կհասնենք այդ նպատակին: Պարենային հարկն ու նրէ հետ կապված մի չարք միջոցառումները կողնեն այդ բանի Դրամով մենք կկարենք մանր արտադրողների անխուսափի լի տատանումների անտեսական արմառը: Իսկ միայն Մէլլուկովի համար նպաստավոր քաղաքական տատանումնեւ զեմ մենք կկուվենք անխնա: Տատանվողները չատ են: Մենք ենք: Տատանվողները բաժան-բաժան են: Մենք միացած ենք: Տատանվողները անտեսապես ինքնուրույն չեն Պրոլետարիատ տնտեսապես ինքնուրույն ե: Տատանվողները չգիտեն՝ ինչ են ուզում: թե՛ ուզում են, թե՛ քաշվում մեկ ել՝ Միլյուկովը չի թույլատրում: Իսկ մենք դիտենք թե ինչ ենք ուզում:

Յեկամ պատճառով ել մենք կհաղթենք:

### ՅԵԶՐԱՓԱԱԿՈՒՄ

Ամփոփենք:

Պարենային հարկը մի անցում և սակմական կոմունիտեց գեպի ուղիղ սոցիալիստական արդյունքափոխանակություն:

Սայրահեղ քայլքայումը, վորն ավելի սրբեց 1920 թանրերության հետեանքով, անհետաձգելիորեն անհրաժեշտ զարձրեց այդ անցումը, քանի վոր անհնարին և արագ վերականգնել խոչըր արդյունաբերությունը:

Այստեղից՝ առաջին հերթին պետք ե բարելավել գյուղացությունը: Դրա միջոցը սրբենային հարկն ե, Հողագործության ու արդյունաբերության միջն շրջանառության զարգացումը, մանր արդյունաբերության զարգացումը:

Շրջանառությաւնն առեարի ազատություն ե, կապիտալիզմ ե: Այդ մեղ ոգտակար ե այն չափով, վորչափով կողնի կովելու մանր արտադրողների մանրատված վիճակի և

լորոշ չափով ել նաև բյուրոկրատիզմի դեմ: Չափը կսահպանի գործնական կյանքը, փորձը: Պրոլետարական իշխանության համար այստեղ վոչինչ չկա սարսափելի, քանի զրոյնտարիատն իր ձեռքում ամուր բռնած և պահում էշ-անությունը, իր ձեռքում ամուր պահում և տրանսպորտն առջոր արգյունաբերությունը:

Սպեկուլարցիայի դեմ մղած կոփվը պետք ե վերածել ակչուսակությունների և պետական հսկողությունից, հաշւառումից ու վերահսկողությունից խուսափելու փորձերի դեմ մղվող կովի: Այդպիսի վերահսկողության միջոցով մենք վորոշ չափով անխուսափելի ու մեզ անհրաժեշտ կապիտալիզմն ուղղում ենք դեպի պետական կապիտալիզմի հունը:

Բազմակողմանի, ամեն կերպ, ինչ գնով ել լինի զարդացնել տեղերի նախաձեռնությունը, ձեռներեցությունը, ինքնուրուցնությունը՝ հողագործության ու արդյունաբերության միջն շրջանառությանը զարկ տալու գործում: Աւագանասիրել գործնական փորձն այս տեսակետից: Այդ փորձի ըստ կարելույն չատ բազմազանություն:

Ոգնություն ցույց տալ մանր արդյունաբերությանը, Խորը ծառայում և զյուղացիական հողագործությանը և ժանդակում և նրա վորքի կանգնելուն. ոգնություն ցույց տալ նրան մինչև վորոշ աստիճան՝ նաև պետական հումք ատակարարելով: Ամենամեծ հանցանքը հումքն անմշակ էողնելին ե:

Զգախենալ այն «ուսումից», վոր կոմունիստները պետք ե ստանան բուրժուական մասնագետներից, վորոնց թվում առեւթե՛ առետրականներից, թե՛ կապիտալիստիկ-կոոպերատորներից և թե՛ կապիտալիստներից: Նրանցից սովորելը ձեռվ ե տարբեր, իսկ ըստ եյության նույնն ե, ինչ սովորում ու ձեռք եցն ըերում զինվորական մասնագետներից: «Գիտության» հետևանքները պետք ե ստուգել միայն գործական փորձով. ամեն ոգտակար ե այն չափով, վորչափով կողնի կովելու մանր արտադրողների մանրատված վիճակի և

կաբողացի՛ր հասնել այն բանին, վոր վոտքի կանգնեցնե՛  
Հողագործությունը, արդյունաբերությունը, զարկ տաս հո-  
ղագործության ու արդյունաբերության միջև շրջանառու-  
թյան զարգացմանը։ Ժլատություն մի՛ անի «գիտության  
համար» վճարելիս գիտության համար թանգ վճարելն ավ-  
տոս չե, միայն թե ուսումը կարգին ընթանա:

Ամեն կերպ ողնել աշխատավորների մասսային, մոտ  
նաև նրան, նրա միջից առաջ քաշել հարյուրավոր ու հաղա-  
րավոր անկուսակցական աշխատողներ՝ անտեսական աշխա-  
տանքի լծելու համար։ Խոկ այն «անկուսակցականներին»,  
վորոնք գործնականում վոչ այլ ինչ են, յեթե վոչ կրոն-  
շտադյան—անկուսակցական նորաձեւ զգեստ հազած մեն-  
շեիներ ու եսերներ, չգուշությամբ պահել բանառում կամ  
ուղարկել Բեռլին, Մարտովի մոտ՝ զուտ զեմոկրատիայի  
բոլոր հմայքներն ազատ կերպով ոգտագործելու համար,  
Զերնովի, Միլյուկովի, վրացի մենշեիների հետ մտքերի  
ազատ փոխանակություն կատարելու համար։

Հայերեն թարգմանության խմբագիր Տ. Ալեքսանյան

Տեխն. խմբ. Ս. Խաչարյան

Սրբագրիչ Վ. Զիդեյյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գավկասի լիազոր №4—2485, հրատ. № 656

Պատվեր № 47, տիրաժ 3.000

Թղթի չափսը  $70 \times 86^{1/16}$  (32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

$3^{1/2}$  տպ. մամուլ,  $1^{3/4}$  թերթ թուղթ.

Հանձնված է արտադրության 23/II 1939 թ.

Ստորագրված է տպագրելու 1/IV 1939 թ.

Դինը 40 կ.

Գևորգաստ—Քաղաքական գրականության հրատարակության տպար  
Ցերեան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0179145

202.

ЧИСЛ 40 ч.

В. И. ЛЕНИН  
О ПРОДОВОЛЬСТВЕННОМ  
НАЛОГЕ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939